

ԻՍՐԱՅԷԼ ՕՂԱՅԻՆ ՀԱՐՈՒՄՏԵՐ ՀԱՍՅՈՒՅ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ԿԵՏԻ ՄԸ

Երեքշաբթի, 20 Դեկտեմբեր 2022-ի կես գիշերուան ժամը 00:30-ին, Իսրայել Թապարիայի հիւսիսարեւելեան շրջանէն բազմաթիւ հրթիռներ արձակեց Դամասկոսի ուղղութեամբ:



Այս առիթով ՍԱՆԱ յայտնեց, որ սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը:

Աղբիւրը աւելցուց, որ յարձակումին հետեւանցով երկու գինուոր վիրաւորուեցաւ եւ կիւրացական վնասներ արձանագրուեցան:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՈՒԿԱՆ ԱՅՅԷԼՈՒԹԻՒՆԸ ԳԱՄԻՇԼԻ ԵՒ ՀԱՍԻՉԷ

16-18 Դեկտեմբեր 2022-ին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, իր ընտրութենէն ետք, առաջնորդական իր անդրանիկ հովուական այցելութիւնը տուաւ Ճեզիրէ շրջանի մեր ժողովուրդի գաւաակներուն:



Արդարեւ, Ուրբաթ, 16 Դեկտեմբեր 2022-ի առաւօտուն, Սրբազան Յայրը ժամանեց Գամիշլի, ուր տեղւոյն օղակայանէն ներս ջերմապետ դիմաւորուեցաւ Ճեզիրէի Առաջնորդական փոխաւորդ Յոգշ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի, Ազգ. երես-

փոխաններու, Ս. Յակոբ Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին, Պատկան Մարմինին, շրջանի ազգայիններու, օղակայանի տնօրէնին եւ գինուորական պատասխանատուին կողմէ, ապա ուղղուեցաւ դէպի Ս. Յակոբ Եկեղեցի, որուն մուտքին պատարհին վրայ գրուած «Օրհնեալ Եկեալ Անուամբ Տեսան»



օրհներգութեան բառերով, ՀՄԸՄ-ի Գամիշլի մասնաճիւղի փողերախումբին խանդավառող նուագակցութեամբ դիմաւորուեցաւ, քրիստոնէայ համայնքներու եպիսկոպոսներուն, եկեղեցւոյ դպրաց դասուն եւ գամիշլիահայութեան կողմէ: Աղ ու հացի աւանդական օրհնութիւն կատարուեցաւ,



Համազգայինի «Վանայ» պարախումբի անդամուհիներուն տարազաւոր ներկայութեամբ:

Սրբազան Հօր պատուիրակութեան մաս կը կազմէին Յոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Արժ. Տ. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան:

Մարինա Չիլմբոջեան-Պողիկեան
 Շար.՝ էջ 12 ➔

Նովանատրութեամբ՝
 Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեանի
 Առաջնորդ Բերիոյ Յայոց Թեմի
 Կազմակերպութեամբ՝
 Ս.Գ.Ն.Կ.
 ՏԵՐԿՈՒԵԼԻ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԻՏՏԵՄԵՐԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 ԻՄԵՐ ԳԱՄԻՐԸ ԴՊՏԱՆ ԿՈՍՏԱՆԻՍՏ

 Օսուկոյ Մաշր Կուսակցութեան
 ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆՊԻՍՈՒԹԻՒՆ
 Օրուան Բանախօս՝
 Ընկ.Ալեքսան Բեռլեքեան
 Ս.Գ.Ն.Կ. Կեդրոնական Վարչութեան Անդամ
 ԳԵՂԱՐՈՒԵՄՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
 ԵՐԿՈՒՇԱՐԹԹ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022-ԻՆ ԵՐԵՎԱՆԵՆ ԺԵՄԸ 7:00-ԻՆ
 Գ. ԵՍԿԵՆ ԽՐԵՇԷՆ ԵՐԵՍ:

«Գանձասար» կը շնորհաւորէ ձեզ Նոր Տարուան եւ Ս. Ծնունդին առիթներով, մաղթելով՝ արեւշաքութիւն, յաջողութիւն եւ ազգիս հայոց նոր ձեռքբերումներու պանծալի փարի մը:
 «Գանձասար»-ի յաջորդ համարը լոյս պիտի տեսնէ 5 Յունուար 2023-ին:

Խմբագրական

ՏԱՐԻ ՄԸ ԵՄ ԲՈՒՈՐԵՑԻՆՔ

2022-ը Սուրիոյ մէջ յատկանշուեցաւ տնտեսական թաւալելոյ անկումով ու կենցաղային ծանր պայմաններով:

«Գանձասար» երբ պատերազմի պայմաններուն մէջ անգամ կը հրատարակուէր գունաւոր տպագրութեամբ, անցող տարիներուն սկսաւ հրատարակուիլ սեւ-ճերմակ տպագրութեամբ, որովհետեւ տպագրական ծախսերը տասնապատկուեցան ու երկրին մէջ նոյնիսկ պետական շարք մը թերթերու տպագրութիւնը դադարեցաւ անգամ:

Փորձեցինք մեր կարելին ընել որ առցանց հրատարակութեան կողքին, թէկուզ նուազ թիւով, պահենք թերթին տպագիր տարբերակը՝ նկատի ունենալով անոր պահանջը:

Թէեւ երկրի ծանր պայմանները ազդեցին աշխատակիցներու աշխոյժ թափին վրայ, օրապահիկի ապահովումը դարձաւ Սուրիոյ բնակչութեան հիմնական մտահոգութիւնը՝ նկատի ունենալով անտրամաբանականօրէն մագլցող սղաճը եւ սահմանափակ եկամուտները, սակայն ի պատիւ մեր մնայուն, նուիրեալ աշխատակիցներուն, երիտասարդ լրագրողներուն ու խմբագրակազմի ժրջան անդամներուն, թերթի հրատարակութիւնը շարունակուեցաւ նոյն թափով՝ հակառակ վառելանիւթի տագնապին, էլեկտրականութեան երկարատեւ անջատումներուն եւ համացանցի տատամսոտ ընթացքին:

Երիտասարդ լրագրողներու վերապատրաստման եռօրեայ սեմինարը, որ կազմակերպուեցաւ Զեսայի մէջ, նպաստեց երիտասարդ տարրին լրագրական եւ հրապարակագրական հետաքրքրութեան աճին ու գիտելիքներու հարստացման: Այդուամենայնիւ, անհրաժեշտ է մղել այս տարրը լրագրութեան ասպարեզի տարբեր ոլորտներ, որպէսզի գիտելիքներուն կողքին փորձառութիւն ձեռք բերեն, աստիճանաբար գարգացնեն իրենց գրիչը, արտայայտուելու յանդակութիւնն ու առարկայականութիւնը:

Համոզուած ենք, որ մամլոյ դաշտը կը հետաքրքրէ երիտասարդութիւնը: Հետաքրքրութենէն անդին, թերթին աշխատակցութիւնը կը բարելաւէ անոնց լեզուն, կը զարգացնէ միտքն ու գրիչը, բայց մանաւանդ հայաշխարհին նայող անծայրածիր պատուհան մը կը բանայ անոնց դիմաց:

Ուստի շարունակական ծրագիրներով կարելի կը դառնայ որակաւոր եւ ընդունակ կորիզի մը պատրաստութիւնը «Գանձասար»-ին շուրջ:

Այս աշխատանքը կարելոր է յատկապէս նկատի ունենալով երկրէն հեռացող երիտասարդութեան համեմատութիւնը: Փորձառութիւն շահողը շրջան մը վերջ կը մեկնի ու կու գայ նորը: Եթէ չպատրաստուի նորը, յառաջիկայ տարիներուն կրնանք տագնապի առջեւ յայտնուիլ, եւ այս երեւոյթը կը վերաբերի ոչ միայն մամլոյ, այլեւ բոլոր մարդերուն:

Սուրիահայ համայնքի վերականգնումի մասին յաճախ կ'արտայայտուինք: Վերականգնումը, սակայն, կը պահանջէ արձանագրուող թերութիւններու յանդուգն մատնանշումներ, սրբագրումի առաջարկներ ու լուծումներ: Վերականգնումը միայն չենք կառուցելով իր նպատակին չի ծառայեր: Անհրաժեշտ է ազգային ու միութենական կենսքի տարբեր ոլորտներու զարգացման նպաստող նոր մտածողութիւն, կառավարուած միտքերէ, կրկնաբանութիւններէ ձեռքազատում:

Այս բոլորը կրնան իրականանալ երբ քննական ակնոցով կը դիտենք մեր առօրեան ու սրբագրելու առաջարկներ կը ներկայացնենք նաեւ մամլոյ ճամբով:

Ուստի թերթը դարձնենք այս քննարկումներուն ազատ բեմը ու Նոր Տարին թեւակոխենք լայնօրէն բանալով դուռը երիտասարդ գրիչներու նոր խօսքին դիմաց:

«Գանձասար» այս տարի կը թեւակոխէ իր հիմնադրութեան 30-ամեակը: Թերթի հիմնադիրները այս յանդուգն քայլին դիմեցին ազգային ու համայնքային մեր կենսքը հարստացնելու մամլոյ շուրջ համախընդրուող մտաւորականներով, միտք ու մտադրութիւն ձեւաւորելու մամլոյ ճամբով ու թերթը դարձնելու սուրիահայութեան ազգային, թեմական ու միութենական կենսքի հայելին:

Դժուար օրեր կը դիմագրուենք Սուրիոյ մէջ, սակայն յանձնառու ենք պահելու 30-տարուան անխափան երթը «Գանձասար»-ին, որովհետեւ կը հաւատանք, որ թերթը համայնքին փափախող սիրտն է:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

«Գ.»

-Երկուշաբթի, 19 Դեկտեմբեր 2022-ին, Հին Հալէպի «Ճտէյտէ» շրջակի «Հաթապ» հրապարակին վրայ կազմակերպուած «Ս. Ծննդեան Գիւղ» փառատօնին բացման եւ տօնածառի լուսաւորման արարողութիւնը տեղի ունեցաւ:



Փ ա ռ ա տ օ ն ը կ'ընդգրկէ 36 տաղաւար՝ ուտեստեղէնի, ձեռարուեստի եւ այլն: Փառատօնին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ հայկական միութիւններ, ոմանք յատուկ տաղաւարներով, ուրիշներ գեղարուեստական յայտագիրի մասնակցութեամբ: Արարողութեան ներկայ գտնուեցան հալէպահայ երեք համայնքապետները, քրիստոնեայ հոգեւոր պետեր եւ իսլամ կոնսուլորներ:



-Քարիւղային արտադրութիւններու ապահովումէն ետք, Սուրիոյ կառավարութիւնը իր հերթական նիստին ընթացքին քննարկեց մագութի բաշխման քայլերը:



Որոշուեցաւ պետական, անձնական հիւանդանոցներուն եւ հանրային փոխադրամիջոցներուն տրամադրելի մագութի քանակը անելցնել, ինչպէս նաեւ յաջորդ բաշխումին ընթացքին առաջնահերթութիւն տալ բնակարաններու օգտագործման մագութին:

-Սուրիոյ նախագահ Պաշշարալ-Ասատ հրապարակեց 2022-ի «24» թուակիր սահմանադրական հրամանագիրը, որուն համաձայն նախքան 21 Դեկտեմբեր 2022-ը քրեական յանցանք գործողներուն համաներում պիտի շնորհուի:



-Սուրիոյ տնտեսութեան եւ արտաքին առեւտուրի նախարար դոկտ. Մուհամետ Սամեր Խալիլ ընդունեց Իրանի պաշտպանութեան նախարարի խորհրդատու, նախարարութեան տնտեսական գործակցութեան կեդրոնի նախագահ Մուսթաֆա Իսպաթին եւ անոր ընկերակցող պատուիրակութիւնը:



Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներուն միջեւ տնտեսական յարաբերութեան եւ գործակցութեան զարգացման միջոցներուն շուրջ:

-Սուրիոյ Կեդրոնական դրամատուը յայտարարեց, որ սուրիական դրամատուներուն մէջ աշխատանքը պիտի շարունակուի, մինչեւ Հինգշաբթի, 22 Դեկտեմբեր 2022-ի աշխատանքային ժամի աւարտը:



Լուրեր Հայաշխարհին

ՎԵՆՍՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՒ ԱՐՖԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԸ
ՀԵՌԱՅԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՅԱՆ

Չորեքշաբթի, 21 Դեկտեմբեր 2022-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսն ու Արցախի Հանրապետության Նախագահ Արայիկ Յարութիւնեանը հեռաձայնային հաղորդակցություն ունեցան:



Նախագահ Յարութիւնեան Վեհափառ Հայրապետին պարզեց Արցախի մէջ ստեղծուած իրավիճակը՝ Ատրպէյճանի կողմէ բնապահական կեղծ պատրուակներով Արցախը մայր Հայաստանին կապող միակ ճանապարհի շրջափակումով, ինչպէս նաեւ մարդասիրական աղետը կանխելու նպատակով տարուող աշխատանքները:

Նորին Ա. Օծուխիւնը, իր կարգին, Նախագահին փոխանցեց Արցախի գծով իր կատարած աշխատանքները՝ յատկապէս միջկեղեցական ու միջկրօնական մարզերէն ներս, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներս կատարուած ու կատարուելիք աշխատանքները եւ իր ամբողջական գորակցութիւնը յայտնեց արցախահայութեան՝ նշելով, որ իր աղօթքներուն մէջ միշտ ներկայ է Արցախը եւ մարդեց, որ Աստուծոյ հովանին գործակից ըլլայ Արցախին ու անոր ժողովուրդին:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԻՋԱԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՐԻՆ
ԿՈՉ Կ՛ՈՒՂՈՒ ԲՈՂՈՐ ՄԻՋՈՇՆԵՐՈՎ ՄԻՋԱՄՏԵԼՈՒ
ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԸ ՎԵՐԱԲՆԱՆՎՈՒ ՀՆՐՅՈՎ

Հինգշաբթի, 15 Դեկտեմբեր 2022-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը միջազգային համայնքին կոչ ուղղեց կարելի բոլոր ազդու միջոցներով միջամտելու, որպէսզի Ատրպէյճանի կողմէ փակուած Արցախի ու Հայաստանի միջեւ կապը երաշխաւորող Լաչինի միջանցքը վերաբացուի:



Իր կոչին մէջ Նորին Ա. Օծուխիւնը անդրադառնալով Արցախի մէջ ապրող հազարաւոր հայերու՝ ընդգծեց, որ անոնք շուտով ենթակայ կըրնան ըլլալ հիւանդութեան ու սովի համաճարակի: Փաստօրէն, Ատրպէյճանի կողմէ նման քայլ մը ցեղասպանութիւն է. հետեւաբար, միջազգային համայնքը իրաւունք չունի անտարբեր եւ լուռ մնալու՝ մարդասիրական ու մարդկային հիմնական օրէնքներու եւ սկզբունքներու խախտումին ու անտեսումին նկատմամբ, շեշտեց վեհափառ հայրապետը:

Յայտնենք, որ Արամ Ա. Կաթողիկոսին յիշեալ կոչը փոխանցուեցաւ միջկեղեցական, միջկրօնական եւ միջազգային կազմակերպութիւններուն ու մամուլին:

ԱՐՖԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
ԴԻՄԱԾ Է ՄԻՋԱԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ

Արցախի Արտաքին Գործոց Նախարարութիւնը կրկին դիմած է միջազգային հանրութեան՝ Արցախի ապաշրջափակման համար համարժէք գործիքակազմ կիրարկելու խնդրանքով:

«Արմէնփրես»-ի համաձայն, Արտաքին Գործոց Նախարարութեան տարածած յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է.

«12 Դեկտեմբերէն Ատրպէյճանի փակած է Արցախը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ ապօրինաբար շրջափակելով Արցախը եւ արհեստականօրէն ստեղծելով ծանր մարդասիրական պայմաններ Արցախի 120 հազարնոց բնակչութեան համար:



Շրջափակման պատճառով կը խախտուին Արցախի ժողովուրդին հիմնարար իրաւունքները: Մարդիկ գրկուած են ազատ տեղաշարժի, պատշաճ բուժօգնութիւն ստանալու իրաւունքէն եւ կենսական նշանակութեան ապրանքներու մատակարարումէն:

Ստեղծուած իրավիճակը Ատրպէյճանի կողմէ տարիներ շարունակ վարուող հայատեսաց քաղաքականութեան տրամաբանական շարունակութիւնն է:

Արցախի արտաքին գերատեսչութիւնը շրջափակման օրէն առ այսօր բազմաթիւ նամակ-դիմումներ յղած է տարբեր երկիրներու եւ միջազգային կազմակերպութիւններու՝ հաւաստի տեղեկատուութիւն տրամադրելով ստեղծուած իրավիճակի վերաբերեալ եւ հայցելով համապատասխան աջակցութիւն՝ Արցախի ապաշրջափակման համար:

Ատրպէյճանի քաղաքականութիւնը մարտահրաւէր է ողջ քաղաքակիրթ աշխարհին եւ անվերապահօրէն պետք է արժանանայ կրշտ արձագանգի»:

«ՖՐԻՏԵՍ ՀԱՌԻՍ». «ԱՏՐՊԵՅՃԱՆ ՊԵՏԷ Է
ՊԱՊԵՅՆԵ ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԻ ՓԱԿՈՒՄԸ»

Ատրպէյճան պետք է դադրեցնէ Լաչինի միջանցքի փակումը, որ Լեռնային Ղարաբաղը արտաքին աշխարհին կապող միակ ճամբան է: Այս մասին յայտարարած է «Ֆրիտըմ Հաուս» միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը՝ միջազգային ընտանիքին կոչ ուղղելով վերահաստատելու իր աջակցութիւնը առանց հարկադրանքի բանակցութիւններուն:

«Մեզ կ'անհանգստացնեն այն տեղեկութիւնները, թէ Ատրպէյճան կըրկին դադրեցուցած է Լեռնային Ղարաբաղի կազմի մատակարարումը: «Ֆրիտըմ Հաուս»-ը Ատրպէյճանի կառավարութեան կոչ կ'ուղղէ՝ վերականգնելու շրջանի բնակիչներուն կազմի անխափան մատակարարումը: Ի վերջոյ, ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի երկիրները եւ 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեան կողմերը կը յորդորենք անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու Լեռնային Ղարաբաղի բնակչութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը՝ ներառեալ տեղաշարժի ազատութիւնը, ապահովելու համար», ըսուած է յայտարարութեան մէջ:



ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԸ ԲՆՆԱՐԿԵՅ
ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը Հայաստանի դիմումին հիման վրայ 20 Դեկտեմբերին նիստ մը գումարեց, որուն ընթացքին քննարկուեցաւ Լաչինի միջանցքին իրավիճակը:

ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի նիստի օրակարգին մէջ ներառուած էր քննարկումը՝ ՄԱԿ-ի Հայաստանի մշտական ներկայացուցիչին՝ Անվտանգութեան Խորհուրդի Նախագահին ուղղուած նամակին հիման վրայ:



Այս մասին յայտնած է նաեւ ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան մամուլի խօսակց Կահան Եունանեան. «Հայաստանի Հանրապետութեան դիմումին հիման վրայ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին մէջ քննարկուեցաւ Լաչինի միջանցքին իրավիճակը», գրած է Եունանեան:

Ատրպէյճան 12 Դեկտեմբերէն մինչ այս պահը փակ կը պահէ Արցախը Հայաստանին եւ աշխարհին կապող միակ մայրուղին՝ Լաչինի միջանցքը:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեկնելով այժմու տնտեսական պայմաններէն, Բերիոյ Հայոց Թեմի Ընկ. Ծառայութեան Խորհուրդը կը շարունակէ իրեն վստահուած մարդասիրական, բարեսիրական եւ բժշկական օժանդակութեան առաքելութիւնը:

Առ այդ, կը տեղեկացնենք գաղութիս Հայ Առաքելական Ժողովուրդի գաւազները, թէ անոնք որոնք կարիքը ունին. -

- Քայլակներու walker
- Ձեռնափայտ-յենակներու عكازة مرصقية
- Անթացուկ-յենակներու عكازة ايطالية
- Օդային-փչովի ներքնակ սպունգներու فريشة هوائية

Կրնան ներկայանալ Ազգային Առաջնորդարանի Ընկ. Ծառայութեան Խորհուրդի գրասենեակ, կամ հեռաձայնել հետեւեալ թիւին (2122758):

Բերիոյ Հայոց Թեմի Ընկ. Ծառայութեան Խորհուրդ

ՀԱՐՑԱԶՈՒՅ

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ. «ԱՐՑԱԽՅԻՆ ՑՈՅՑ Է ՏԱԼԻՍ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ, ՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԿՐԱԾ ԾԱՆՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ԷԼ ԹԵԻԱԹ-ԱՓ ՉԻ ԵՂԵԼ ԵՒ Ի ԶՕՐՈՒ Է ԱՄԵՆԱԾԱՆՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆԳԱՄ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵԼ, ՀԱՄԱԽՄԲՈՒԵԼ ԵՒ ՊԱՅՔԱՐԵԼ ԹՇՆԱՄՈՒ ԴԷՄ»

Ալեյի քան շաբաթ մըն է, որ Ատրպեյճան փակ կը պահէ Զայաստանը Արցախին կապող Բերձորի (Լաչին) միջանցքը: Արցախցիներուն տագնապին եւ Արցախի ներկայ իրավիճակին մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար «Գանձասար» կապ հաստատեց Արցախի ԶՅԴ պաշտօնաթերթը «Ապառաժ»-ի աշխատակից Վահագն Խաչատրեանի հետ, որ հետեւեալ մանրամասնութիւնները փոխանցեց:

«Գանձասար» Կրնա՞ք յստակօրէն ներկայացնել, թէ ի՞նչ էին Բերձորի (Լաչին) միջանցքի փակման եւ Արցախի բնակչութեան կազմատակարարման խափանման Ատրպեյճանի պատրուակները, ի՞նչ է իրավիճակը ներկայիս (ներառեալ կրթական հիմնարկներու պարագան):

Վահագն Խաչատրեան: Դեռեւս Դեկտեմբերի 3-ին, Շուշիի հատուածում քաղաքացիական հազուստներով մի խումբ ատրպեյճանցիներ էին բնապահական կեղծ պատճառաբանութեամբ փակել Արցախը մայր Զայաստանին կապող միակ մայրուղին:



Ճանապարհը բացելու նպատակով ատրպեյճանական կողմին հետ Արցախում տեղակայուած ռուսական խաղաղապահ զօրակազմի բնակացութիւնները յետոյ հնարաւոր եղաւ հասնել խնդրի կարգաւորմանը: Դեկտեմբերի 10-ին յայտնի դարձաւ, որ Ատրպեյճանցի «բնապահականներ»-ը ռուս խաղաղապահների ուղեկցութեամբ հասել են Կաշէնի հանք, սակայն հանքի աշխատակիցներն ու յարակից գիւղի բնակիչները փակել էին նրանց ճանապարհին ու արգելել մուտք գործել հանքի տարածք:



Դեկտեմբերի 12-ին արդէն յայտնի դարձաւ, որ ատրպեյճանցի «ակտիւիստները» ցոյց են անում ռուս խաղաղապահների դէմ պահանջելով դադարեցնել «հայերի կողմից Արցախում իրականացուող բնապահական անարբեկչութիւնը» եւ առաւօտեան ժամը 10:30-ի հատուածում փակել են Ստեփանակերտ-Գորիս մայրուղին:

Հասկանալի է, որ Ատրպեյճանի պահանջներն ամենեւին էլ բնապահական խնդիրները չեն, դա վկայում են նաեւ բնապահականներ ներկայացող քաղաքացիական հազուստով ատրպեյճանցի յատուկ ջոկատայինները: Հանքարդիւնաբերութիւնն ապահովում է Արցախի պիւտճէի հարկային եկամուտների մեծ մասը. ուստի նրանք ցանկանում են վերահսկողութեան տակ առնել հանքի աշխատանքները, բացի դրանից, շրջափակելով Արցախը, Ատրպեյճան ցանկանում է ճնշել արցախցիներին, այդպիսով արագացնելով Արցախի հայաթափումը, որով նրանք ցանկանում են Արցախը էթնիկ գտման ենթարկել: Աշխարհում տեղի ունեցող զարգացումների համատեքստում, դժուար չէ հասկանալ, որ Ատրպեյճանն ու Թուրքիան փորձում են օգտուել Զայաստանի թուլացած վիճակից եւ հնարաւորինս շատ ճնշումներով առաւելագոյն պահանջներ ներկայացնել ու ստանալ դրանք: Ձմրան այս ցուրտ պայմաններում, Ատրպեյճան փորձում էր նաեւ Էներ-

կեթիկ ճգնաժամ յառաջացնել Արցախում՝ անջատելով Արցախը սնուցող կազատարն ու Արցախը գրկելով բնական կազ ստանալու հնարաւորութիւնից: Սակայն սա երկար չտեւեց եւ մեզ համար դեռեւս անհասկանալի պայմաններում Ատրպեյճան վերականգնեց Արցախի կազամատակարարումը: Այս պահի դրութեամբ վերականգնուել է ուսումնական գործընթացը, որ դադարեցուել էր ջեռուցման բացակայութեան պատճառով:

Առ այսօր Ատրպեյճան շարունակում է քաղաքակիրթ աշխարհի աչքի առջեւ պատանդ պահել Արցախի 120.000-ից ավելի քաղաքացիներին՝ խախտելով միջազգայնօրէն ընդունուած մարդու հիմնարար իրաւունքներն ու միջազգային օրէնքները:

«Գ»- Մարդասիրական ինչպիսի՞ օժանդակութիւններ տեղի ունեցան եւ տակաւին ինչպիսի՞ օժանդակութիւններու կարիքը ունի Արցախը այսօր:

Վ.Խ. - Ցաւօք սրտի որեւէ մարդասիրական օժանդակութիւն Արցախում չի իրականացուել: Այժմ հրատապ է մնում սնունդ եւ դեղորայք ներմուծելու եւ ծանր հիւանդներին Արցախի Հանրապետութիւնից դուրս բուժում ստանալու անհնարիտութեան հարցը: Պարզ է, որ պաշարներն Արցախում անսպառ չեն. այս պահի դրութեամբ զգացում է յատկապէս մանկական կերերի պակասը: Սակայն Արցախի ժողովուրդը խնայելիս այս բոլոր դժուարութիւնները գիտակցելով կատարել է իր ընտրութիւնը, այն է՝ դիմանալ բոլոր դժուարութիւններին, սակայն որեւէ զիջում չանել: Պետական շահը վեր է ամեն ինչից. այս գիտակցումը կայ է՝ իշխանութիւնների, ե՛ւ ժողովրդի մօտ, ինչը բաւականին ոգեւորիչ է շրջափակման մէջ յայտնուած



մեր ժողովրդի համար: Արցախցին կարողացել է յաղթահարել 90-ականների մութ ու ցուրտ տարիները, սովը, 44-օրեայ պատերազմի արիւնքը եւ վստահ եմ, որ այս անգամ եւս մեր միասնականութեամբ կը կարողանանք յաղթահարել վրայ հասած փորձութիւնը: Արցախցին ցոյց է տալիս ամբողջ աշխարհին, որ պատերազմում կրած ծանր կորուստներից յետոյ էլ թեւաթափ չի եղել եւ ի գօրու է ամենածանր պայմաններում անգամ ոտքի կանգնել, համախմբուել եւ պայքարել թշնամու դէմ:

«Գ» Ի՞նչ ջանքեր գործադրուեցան Ատրպեյճանի ստորանքներու գծով միջազգային ընտանիքին մօտ արձագանգելու: ԶՅԴ Զայ Դատի եւ այլ մարմիններու դերակատարութիւնը ի՞նչ էր այս փուլին:

Վ.Խ. - Արցախի շրջափակման պահից ի վեր ԶՅԴ Արցախի երիտասարդական Միութիւնը ձեռնամուխ է եղել բազմալեզու տեսահոլովակների պատրաստմանը, որպէսզի արտաքին աշխարհին տեղեկացնի ստեղծուած մարդկային ճգնաժամի մասին: Այս նախաձեռնութեանը միացել են նաեւ Արցախի համալսարանները, տարբեր կազմակերպութիւններ եւ երիտասարդներ:

Այս գործընթացում, սակայն, իր առանձնայատուկ դերն ունեն Զայ Դատի գրասենեակները: Գետնի վրայ մեծ աշխատանք է տանում յատկապէս ԶՅԴ Զայ Դատի գրասենեակը՝ տեղում ազդու տեղեկատուութիւն հաւաքելով եւ փոխանցելով: ԶՅԴ Զայ Դատի գրասենեակների աշխատանքների շնորհիւ աշխարհի տարբեր երկրներից՝ այդ թւում նաեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկրների՝ ԱՄՆ-ից եւ Ֆրանսիայից տասնեակ պատգամաւորներ, քաղաքական գործիչներ ու կազմակերպութիւններ դատապարտել են Ատրպեյճանի հակամարդկային գործողութիւնները: Գրասենեակները նաեւ նամակներ են յղել Ֆրանսիայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի եւ ԱՄՆ նախագահ Ժօ Պայտրին՝ պահանջելով քայլերի ձեռնարկել ստեղծուած իրավիճակը հանգուցալուծելու համար:

Չարգագորոյցը վարեց Վեհան Պարսումեան

ՆՇԱՐ

ՀԱՍԿՑՈՂԻՆ ՇԱՏ ԲԱՐԵՒ...



Ս. Մախսեթեան

Միացեալ Նահանգներու Նախորդ Նախագահը՝ Տանըլտ Թրամփ, Երկուշաբթի, 19 Դեկտեմբերին, պաշտօնապէս եւ անառարկելիօրէն ամբաստանուեցաւ իբրեւ ոճրագործ, իբրեւ Սահմանադրութիւնը ոտնակոխելու, իշխանութիւնը կամայականօրէն բռնագրաւելու փորձ կատարելու, այդ նպատակով խռովութիւն հրահրելու, մեղակիցներ որսալու եւ նմանօրինակ յանցանքներու, մեղքերու շարքով մը:

Ամբաստանագիրը միաձայնութեամբ որդեգրուեցաւ 6 Յունուար 2021-ի ծանօթ դէպքերուն շուրջ քննութիւն կատարող՝ ամերիկեան Ազգային ժողովի յանձնախումբին կողմէ, որ բաղկացած է թէ՛ դեմոկրատ եւ թէ՛ հանրապետական անդամներէ, թիւով ինը: Ուղղակի պատկերասփռուած նիստի մը պահուն, որ իր աշխատանքին ամբողջ կը նշէր, խորհրդարանական յանձնախումբը հրապարակեց մօտաւորապէս մէկ ու կէս տարի տեւած իր հարցապնդումներուն եւ քննութիւններուն եզրակացութիւնները եւ ՄԻԱՁԱՅՆՈՒԹԵԱԿԱՆ որդեգրեց ծանրագոյն ամբաստանութիւնները պարունակող բանաձեւը, յայտարարելով, որ հիմա գնդակը կը գըտ-նուի իրաւական համակարգի դաշտին մէջ, այսինքն՝ արդարադատութիւնը պետք է վճռէ, թէ նման ծանր յանցանքներ կատարող մը ինչպիսի՞ պատիժի (պատիժներու) արժանի է: (Հաւանաբար մեղակիցներն ալ չեն անտեսուիր):

Աւելի քան մէկ ժամ տեւած նիստին, հերթաբար խօսք անին յանձնախումբի բոլոր անդամները, որոնք թուեցին «Նարնջագոյն մարդուն» գլխաւոր յանցանքները, անարդարանալի արարքներն ու ՊԵՏՈՒԹԻՒՆԸ հարուածելու, վարկաբեկելու, մինչեւ իսկ անոր լինելութիւնը վտանգելու խաղըութիւնները: Նախկին նախագահին կուսակցութեան անդամներ եւ ընդդիմադիրներ՝ չքմեղանքի, յանցանքները մեղմացնելու ո՛չ մէկ բառ արտասանեցին: Անոնք նաեւ քաղուածքներ ներկայացուցին իրենց մէկտեղած վկայութիւններէն, որոնց ճամբով, Թրամփի բազմաթիւ սերտ գործակիցներ անգամ գայն անվարան նըստեցուցին մեղապարտի աթոռին: Իրողական մեղադրականներ հնչեցին մինչեւ իսկ... Թրամփ ընտանիքի անդամներու բերնէն:

Փաստարկուած է, որ մարդուկը անձամբ ղեկավարած է ՊԵՏՈՒԹԵԱԿԱՆ դէմ գործողութիւնները (Նախապատրաստելով, հրահրելով, առաջնորդելով եւ ձեռնածալ մատուցելով), երբ հազարաւոր հրոսակներ յարձակում գործեցին խորհրդարանի շէնքին վրայ, ծանր վնասներ պատճառեցին, սպանեցին ու վիրաւորեցին ոստիկաններ ու պաշ-

տօնեաներ, սպառնացին խորհրդարանականներու եւ այլոց կեանքին (օրինակ, կը պահանջէին կախաղան հանել Թրամփի շուրջ եղող փոխ նախագահ Փենսը կամ մահուան գիրկը դրկել Նէսի Փըլոսին): Փաստարկուած է, որ շուրջ 3 ժամ տեւած խռովութիւններու պահուն, Թրամփ մերժած է անսալ ամենէն սերտ գործակիցներու թախանձանքին, որպէսզի գսպէ վայրագութիւնները, չէ դիմած ապահովութեան որեւէ ուժի միջամտութեան: Աւելին՝ նախագահական ընտրութիւններէն ետք, 6 Յունուարէն շատ անառ, բազմաճիւղ ճնշումներու ենթարկած է գործակիցներ, նահանգներու կառավարիչներ եւ այլ պաշտօնակատարներ, որպէսզի ապօրինի միջոցներու դիմէն եւ գինք յաղթական հռչակէն, վստահեցնելով, որ ինք պիտի ստանձնէ բոլոր օրինագրութիւններուն պատասխանատուութիւնը: (Յաջողելու պարագային, ան ալ կըրնար ըսել՝ պատասխանատուն ես եմ, բայց մեղաւոր չեմ...)

Թրամփի դէմ վկայութիւն տուողներու շարքին եղած են իր նախարարներէն, Սպիտակ Տան բարձրաստիճան պաշտօնակատարներէն եւ արդարադատութեան բաժանմունքէն մարդիկ, որոնք նախընթաց փուլին բացայայտօրէն յանձնառած էին նախագահին ուսապարկի դերը, սակայն տեղ մը կանգ առած են եւ ետդարձ կատարած՝ կործանարար ընթացքէն: Անշուշտ փոքրաթիւ խմբակ մը հաւատարիմ մնացած է (այսօր ալ է) ուսապարկի դերին: Այս տրամաբանութեամբ ալ, յանձնախումբին եզրակացութիւնները կրնան մեկնաբանուիլ իբրեւ նախագահին կարգ մը գործակիցները սպիտակով, ուրիշներ սեւով ներկելու արարողութիւն մը:

Բազում մեղադրանքներուն շարքին, մէկ քանին աղաղակող են: Թրամփ ինքզինք դրած է պետութեան գերիվեր տեղ մը, յայտարարած՝ որ եթէ իր վերընտրութիւնը չապահովուի, հանրապետութիւնն ու պետութիւնը գոյութիւն պիտի չունենան: «Ես եմ քու տէր-Նախագահդ, ինձմէ՛ գատ Նախագահ պիտի չունենաս», պատգամած է Նոր օրերու Եհովան (ինչպէս որ ուրիշ մարդուկ մը յայտարարած էր. կամ՝ ես վարչապետ կ'ըլլամ, կամ...):

Քննիչ յանձնախումբին խարանող եզրակացութիւնները այս հարցին ճամբուն պայթած Նորագոյն ռուբը եղան, իրենց վրայ կեղոնացուցին ամերիկացիներուն եւ ամբողջ աշխարհի ուշադրութիւնը, լուսարձակները շատ արագ խլելով ճիշդ օր մը անառ վերջ գտած «Մոնտիալ»-էն: Վաղը, պիտի ծագին

հազար ու մէկ Նոր լուսարձակ. Թրամփի հակադրեալներ՝ հանրապետական թէ՛ դեմոկրատ, Նոր վառելակալիք պիտի ապահովեն իրենց արշաւանքներուն՝ խորտակելու համար թեկնածու ներկայանալու անոր երազները, իսկ նախկին նախագահին հաւատարիմ կոյրեր եւ խուլեր պիտի շարունակեն պաշտպանել անպաշտպանելին, պիտի հռչակեն, թէ չեն կրնար հրաժարիլ անոր ուսապարկը մնալու «վայելքներէն»:

Թրամփի դէմ արձակուած ամբաստանագիրը Նորութիւնն է: Անոր յանցապարտութիւնը ակնհայտ էր Նոյնիքն 6 Յունուար 2021-ին: Կարելի է մինչեւ իսկ մտածել, որ այս խառն յանձնախումբը պարզապէս ժամանակ վատնեց, փաստեր եւ վկայութիւններ մէկտեղելու համար



անծածկելիին մասին, որոնք բացայայտ էին Նոյնիքն դէպքին օրը եւ յաջորդող քանի մը օրերուն:

Այսուհանդերձ, կայ կէտ մը, որ կ'արդարացնէ այս գործընթացը: Եղած յանցագործութիւնը անմիջական, երեւութաբան թուացող դէպքերու հիմամբ չէ, որ կը դատուի ու կը դատապարտուի, այլ՝ կարելի ամենէն մանրամասն քննութիւններէն ետք, որպէսզի թագաւորին մերկութիւնը ծածկող տերեւ մը իսկ չմնայ: Այս աշխատանքը իրականացած է այլապէս իրարու կոկորդ սեղմող, մինչեւ այսօր ալ սուր մրցակցութիւն վարող կուսակցութեանց ներկայացուցիչներուն կողմէ, որոնք սակայն տեղ մը ահաւասիկ ՄԻԱՁԱՅՆՈՒԹԵԱԿԱՆ կը հասնին, երբ կը տեսնեն որ անձերէն անդին՝ երկիրն ու ՊԵՏՈՒԹԻՒՆԸ վտանգի տակ են, անհատի մը կողմէ խաղալիք դառնալու վիճակին կը մատուցին: Թրամփի դէմ վկայութիւն տուողները (մինչեւ իսկ եթէ սա կամ նա քաղաքական հաշիւը կը հետապնդեն) իրենց շարքին կը հաշուեն այնպի-

սիներ, որոնք նախընթաց փուլերուն պաշտպանած են իրողական խեղկատակ-խամաճիկին աղաղակող այլ սայթաքումները, օրինագրութիւնները, սակայն տեղ մը տեսած են կարմիր գիծը, չեն անցած անկէ անդին, չեն ըսած, որ իրենց պոստը կը պահանջէ նշաճողը իջեցնել ու անոր վրայ ասֆալթ փռել, պետութեան ու երկրին-ժողովուրդին հաւատարմութեան փոխարէն՝ հաւատարիմ մնալ անոր անձին, աթոռին:

Յստակ է, որ Թրամփի պատմական գայթակղութեանց հետեւանքով, Միացեալ Նահանգներ հողային կորուստներ չունեցան, հազարաւոր կեանքեր չկորսուեցան, աղետալի ատեր, բռնագաղթեր տեղի չունեցան, այլ մարդիկ՝ ժողովուրդէն ալ պատկառելի գանգուած մը՝ սորվեցան, թէ նշաճող իջեցնելն ալ ունի ի՞ր սահմանները, տրամաբանութիւնը...

(Այս բոլոր արձանագրելով, նպատակ չունինք խտայականացնելու նախորդ կամ այժմու նախագահներու, ամերիկեան կամ որեւէ այլ գերութի այլապէս անընդունելի վարմունքները, արարքները, սակայն այսօր վեճ չկայ, թէ Թրամփի ըրածը աննախընթաց յանցանք էր, համազօր՝ պետական մակարդակի ոճիրի, Սահմանադրութեան վրայ իր տուած երդումին դաւաճանութեան):

Եթէ երկրի ու պետութեան շահերու պաշտպանութեան դիտանկիւնէն՝ այս բոլորը փոխադրենք «ժողովրդավարութեան պատիւին» Յայաստան եւ յանձնենք իշխանաւորին ուսապարկելուն ու «մասնաշաղկապներուն» ուշադրութեան (յուսանք ամերիկացի Նոր նշանակեալ դեսպանը այս թղթածրարին ամփոփումը տանի Երեւան), առարկայական մօտեցումով՝ գատորոշենք բաղդատելին ու անբաղդատելին, յիշենք, որ 44-օրեայ պատերազմին շուրջ սպասուած քննութիւնը չէ բացուած (այսօր ո՞վ է անկէ ետք եղած կորուստներուն մասին քննութիւն պահանջողը), իսկ Ապրիլեանին շուրջ քննութիւնն ալ տարօրինակ խայտառակութիւններու դուռ բացած է, կրնանք մէկ բան արձանագրել անվարան. ՀԱՍԿՑՈՂԻՆ ՇԱՏ ԲԱՐԵՒ, յուսալով, որ հասկցողները բազմաթիւ թէ՛ Յայաստանի եւ թէ՛ հայաշխարհի տարածքին:

ԱՌԻԹՆԵՐ ԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 6

Առիթներ կան անխտիր բոլորիս: Յատկապէս տարուան ամառին վառ յոյսերով, երազներով եւ լաւ իրավիճակներ տեսնելու ակնկալութեամբ կը փափաքինք դիմաւորել 2023 թուականը: Բայց նաեւ կ'ուզենք հինը Նորոգել, սրբագրելու ճիգ թափել, Աստուծոյ շնորհակալութիւն յայտնել, մարդոց հետ մեր յարաբերութիւնը սիրով համեմել եւ մեր ընտանեկան յարկը շէնցնել լուսեղէն մտածումներով եւ առաքիլութեան գարդերով:

2022-ի մայրամուտը անիջ է հաշտութեան գովքը հիւսելու, խաղաղութիւն սերմանելու, ներելու եւ նուիրուելու, եւ առածին բառերով. «հաւարը անիծելու փոխարէն մում վառելու»:

Երբ տարեվերջը կը մօտենայ, լաւագոյն ձեւով օգտագործենք ժամանակը: Նոր Տարուան սեմին կանգնած ենք եւ լաւատեսութեամբ կը սպասենք դրական փոփոխութիւններ եւ ուրախալի Նորութիւններ: Բայց մեծագոյն ուրախութիւնն է Յիսուսի Սուրբ ծննդեան տօնը: Առիթ մը, որ քաղցր հրաւեր է շնորհքով գործելու, սիրով ծառայելու, եւ Ս. Ծննդեան տօնին օրինութիւնը ամբողջ տարին վայելելու:

ԱՌԻԹՆԵՐ ԿԱՆ



Խորեն Զինյ, Պերթոլեան

Տարեվերջը մօտեցավ: Մեր մանկության օրերուն կը կարծէիք թէ կեանքը երկար ժամանակահատուած է: Բայց կեանքի փորձառութեան շնորհիւ եւ յետադարձ ակնարկով կ'ընդունինք թէ կեանքը կարճատեւ ընթացք ունի, առաքելիկ բառերով «Ձեր կեանքը մշուշիկն պէս է, որ կարճ ժամանակ մը կ'երեւի եւ ապա կ'աներեւութանայ» (Յկ 4.14):

Տօնածառի շքեղութենէն եւ գարդարանքի գրաւչութենէն անդին կը սկսիմ մտածել եզակի առիթներ օգտագործելու կարելորութեան մասին: Կեանքը արժեւորելու համար հարկ է ի մտի ունենալ թէ առիթները իմաստալից եւ դաստիարակիչ կայարաններ են: Օրինակ՝ տարեվերջը ինքնաքննութեան առիթ է, Ամանորը գոհունակութիւն զգալու եւ ցնծութեամբ Նոր Տարին դիմաւորելու առիթ է: Աստուծոյ բարիքները վերլուծելու առիթ է ամէն Նոր օր, որ կը դիմաւորենք: Հոգեւոր արթնութեան հրաւիրող, անկիւնադարձային փոփոխութեան նպաստող, հոգեւոր աճման միջոց հանդիսացող եւ կեանքէն դասեր քաղելու անհրաժեշտութիւնը մեր ուշադրութեան յանձնող օրինաբեր առիթներ կան: Ասոնք պատահական կերպով չեն ըլլար: Այլ՝ Աստուծոյ բարի կամքին ցուցանիշը եղող իրականութիւններ են, որոնք մեր առօրեային հետ սերտ առնչութիւն ունին: Առաքելիկ բառերով. «Աստուած բարիին գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն զինք...» (Յռ 8.28):

Առիթ կայ, օգտագործելու է անյետաձգելին: Առիթը կը նմանի բանալիի, իսկ յաջողութիւնը՝ դուռի: Առիթը օգտագործողին առջեւ կը բացուին յաջողութեան եւ օրինութեան դռները: Մարդիկ յաճախ յաջողութիւնը կը վերագրեն միայն նիւթական բարգաւաճման եւ տնտեսական կայունութեան հետ: Չուտ նիւթական չափանիշով կարելի չէ նայիլ կեանքին, մարդը ունի հոգեւոր ներաշխարհ, բարոյական աշխարհ, մտային եւ զգացական բաժին: Դրանով չենք կրնար սահմանափակել կեանքը: Մարդ սիրաշահիլն ալ արուեստ է, վստահութիւն չափիլը դրամագլուխ է, ժամանակը շահարկելը ձեռով մը տնտեսագիտութիւն է, գիտելիք եւ փորձառութիւն ունենալը տուեալ է, աշխատասեր ըլլալը յատկութիւն է եւ շնորհները յայտնաբերելը յաջողութեան դուռը թակող ընթացք է: Այս բոլորը միասին կը կազմեն յաջողութեան յատկագիծը, որպէսզի մարդը կարենայ յաջողակ ընթացք ունենալ եւ պատուաբեր ապագայ կերտել:



Ներդրութիւնն ալ առիթ է, թէ եւ անտեսանելի կը թուին ներդրութեան մէջ ծածուկ մնացող խորհրդաւոր «առիթները»: Ներկացուցեալ ընդմէջէն դասեր քաղելու եւ պատահածներուն վերաբերեալ խորքային մօտեցում ցուցաբերելու առիթներ կան: Անցեալի ներդրութիւնները մեր դիմադրողականութիւնը զօրացնող պատուաստներ են: Երեւութապէս վնասաբեր համարուած պէս պէս ներդրութիւնները առիթներ են՝ լուծում փնտռելու, ելքի ճանապարհ որոնելու, աղօթքի մէջ յարատեւելու, բայց մանաւանդ Աստուծոյ վստահելու: Ամիսներ առաջ ծխայիլներէս մին տեսայ: Տարիներէ ի վեր հեռաւոր ցամաքամաս տեղափոխուած էր: Ան հարցուց. «Տեր հայր զիտես ինչո՞ւ մեր կողմերը անհաւատութիւնը տարածուած է»: Չկրցայ հաստատ պատասխան տալ: Ան ըսաւ. «Որովհետեւ ամէն ինչ ապահով է եւ առատ: Մարդիկ Աստուծոյ փնտռելու կարիքը չեն զգար»: Փորձառու ծխայիլս իրատես կերպով երեւոյթը պարզեց: Սովորաբար ճոխ պայմանները անտարբերութեան, մոլութեան եւ անառակութեան պատրուակ դարձած են շատերուն համար: Իսկ տազնապալի պահերը եւ դժուարին կացութիւնը առիթներ են՝ հաւատքին կառչելու, տոկալու, դասեր քաղելու եւ իմաստութեամբ ապրելու:

Հաւատքի կեանքին մէջ խաչը մեզի համար տանջանքի գործիք չէ, այլ՝ Յարութիւնը կանխող հանգրուան եւ յաղթանակի նախանշան: Սուգը միայն աշխարհի ունայնութիւնը յիշելու եւ ցաւ զգալու առիթ չէ, այլ՝ կեանքը արժեւորելու եւ Արքայութեան հասնելու նպատակով ապրելու կոչ: Կան առիթներ, որոնք աստուածային արտօնութեամբ եւ յաճախ իր միջամտութեամբ ազդու միջոց կը հանդիսանան մեղքի կապանքներէն ազատագրուելու, կաղապարուած մտայնութիւններէն հրաժարելու, սխալը հերքելու եւ ես-ի ներշնչագիծէն դուրս գալու համար:

Գիտական հրաշալի գիտերը եւ հաւատքի փոխանակներուն երթը արդիւնքն են տազնապալի, որուն ճամբով լուսամիտ եւ առաքիլի մարդիկ կեանքը գեղեցկացուցին եւ գալիք սերունդներուն բարիքներ կտակեցին: Ներդրութիւնը իրենց կեանքը առաքելութեան վերածելու առիթ ստեղծեցին, սիրով գործեցին եւ հարուստ իրագործումներով մարդկութեան բեռը թեթեւցուցին, այդպիսով յիշատակութեան արժանի եղան:

Առիթը սպասել ձեռնածալ մնալ եւ անտարբեր ըլլալ չի նշանակեր: *Շար. Էջ 5*

ՀԱՐՅԱՅՐՈՅ

ԲԵՍԱՊԻ «ԿԻԼԿԻԱ» ԵՐԳՉԱԿՆՈՒՄԲԸ ՀՈԳԾ. ՏԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ՔԻՐԻՄՍԵԱՆԻ ԽՄԲԱՎԱՐՈՒԹԵԱՄ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ ԱՄԱՆՈՐԵԱՆ ՀԱՄԵՐԳԻ

«Գանձասար»- Հայր սուրբ, հակառակ ձեր բազմազբաղ ըլլալուն որպէս Զեսայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ եւ Ազգ. Միացեալ վարժարանի դասատու, ստանձնեցիք «Կիլիկիա» երգչախումբի գեղարուեստական ղեկավարութիւնը: Երգչախումբային ոլորտի ձեր հետաքրքրութիւնը ուրկէ՞ ծնունդ առած է:

Հայր Անդրանիկ Վրդ. Քիրիմեան- Դպրեկանքին մէջ եկեղեցական երաժշտութեան մարզին առնչուող ինծի վստահուած պաշտօնները երեւան բերին ու գարգացուցին երաժշտական հակումներս: Միւս կողմէ Լիբանանի Համագալիկի կազմակերպած թատերական բեմադրական եւ դերասանական դասընթացքին ալ հետեւած ու վկայուած եմ: Ուստի առաջարկեցի Զեսայի Համագալիկի «Համօ Օհանջանեան» Մասնաճիւղի Վարչութեան թատերական կամ երաժշտական աշխատանք մը սկսիլ եւ յարմար նկատեցիք Զեսայի Համագալիկի «Կիլիկիա» երգչախումբը վերստին կեանքի կոչել օրուան Առաջնորդ Սրբազան Հօր հաւանութեամբ եւ օրինութեամբ:



«Գ.»- Փորձերը հեզասահ ընթացա՞ն: Դժուարութիւններ դիմագրաւեցի՞ք երգչախումբային փորձերու վերականգնող նախաձեռնելով:

Հ. Ա. Վ. Բ. - Հիմնական դժուարութիւնը երգչախումբի անդամներու երաժշտական գիտելիքներու անբաւարար ըլլալն էր, հակառակ անոր որ ոմանք Համագալիկի կազմակերպած սոլֆեժի եւ ձայնամարդութեան դասընթացքին հետեւած էին: Այդուհանդերձ անոնց հետեւողական աշխատանքը արդիւնաւորուեցաւ եւ այս դժուարութիւնը հարթուեցաւ: Միւս դժուարութիւնը երթելու կեանքի հարցն էր, նկատի ունենալով երկրի տնտեսական եւ վառելանիւթի տագնապները: Այդ հարցն ալ վարչութեան հետ խորհրդակցաբար լուծեցինք եւ այսպիսի պայմաններու մէջ, երգչախումբի անդամներուն կարելիութիւններու լարումով յաջողեցանք բեմ հանել «Կիլիկիա» երգչախումբը ու մեր լաւագոյնը ներկայացնել քեսապահայութեան:

«Գ.»- Խօսի՞նք երգացանկին մասին: Ինչպիսի՞ երգեր ընտրեցիք:

Հ. Ա. Վ. Բ. - Նկատի ունենալով մեր ազգային արժեքներու պահպանման կարեւորութիւնը, հայրենիքի թէ Արցախի իրադարձութիւնները, երգացանկին մէջ ներառեցինք քեսապահայութեան սրտին խօսող ազգային-ժողովրդական 18 երգեր՝ բարձր պահելու մեր ժողովուրդի ազգային ոգին: Համերգը փակեցինք համագալիկի միասնութեան խորհուրդը հնչեցնող «Հայեր», Միացե՛ք երգով:

«Գ.»- 28 Ներդրութիւն, Նոր Տարուան սեմին կրկին ելոյթ պիտի ունենայ «Կիլիկիա» երգչախումբը ձեր խմբավարութեամբ Ի՞նչ նորութիւններ պիտի հրամցնէք այս համերգով:

Հ. Ա. Վ. Բ. - Համերգը նուիրուած է Ս. Ծնունդին եւ Նոր Տարուան: Վերջերս երբ Լիբանան էի, վարդապետական ձեռնադրութեան առիթով, այս միտքը յղացայ: Կը հաւատանք, որ Ս. Ծնունդի երգերով, Քրիստոսի Ծնունդը անտեղիվ հանդիսականներու հոգիներուն մէջ յոյս եւ ուրախութիւն պիտի սփռենք, որպէսզի անոնք, յաղթահարելով ներկայ դժուարութիւնները, Նոր Տարին սկսին հոգեկան վերանորոգ լիցքով, վերականգնումի տեսլականով:

«Գ.»- Հայր սուրբ, այս համերգի նախապատրաստման փորձերուն նկատելի էր երգչախումբի թիւին աճը: Այս անգամ պատանիներ՞ ալ ներգրաւուած են երգչախումբին մէջ:

Հ. Ա. Վ. Բ. - Մեր առաջին ելոյթին՝ 28 Յունիս 2022-ին, անդամներու թիւը 28 էր: Համերգէն խանդավառուած ու ներշնչուած, շատեր փափաք յայտնեցին միանալու խումբին, ու մեր թիւը հասաւ 50-ի:

Ամանորեան ելոյթին փոքրեր ալ կը մասնակցին, որովհետեւ Ս. Ծնունդի երգերու մեկնաբանութիւնը փոքրերու կողմէ անելի հոգեհարազատ կը հնչէ:

«Գ.»- Հարցազրոյցի աւարտին Ի՞նչ կ'ուզէք անելցնել, հայր սուրբ:

Հ. Ա. Վ. Բ. - Նախ կ'ուզեմ փառք տալ Աստուծոյ, որ անգամ մը եւս առիթ պիտի ունենանք բեմ բարձրանալու:

Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին՝ համերգի հովանաւորութեան եւ անոր անձամբ ներկայ գտնուելու փափաքին համար: Ընդհանրապէս Համագալիկի «Համօ Օհանջանեան» Մասնաճիւղի Վարչութեան, որ թեւ ու թիկունք կանգնեցաւ երգչախումբին: Ընդհանրապէս «Կիլիկիա» երգչախումբի անդամներուն, որոնք բազում գոհողութիւններով հետեւեցան փորձերուն ու նպաստեցին խումբի յաջողութեան: Վերջապէս շնորհակալութիւն «Գանձասար»-ին եւ ձեզի՝ այս հարցազրոյցին համար:

Հարցազրոյցը վարեց Սեւան Մանճիկեան

Պրիսմակետ

ՑԱՆԵԼՈՒ ԵՒ ԱՅԼ ԲԱՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ



Մարուշ Երամեան

Եկեք պահ մը մոռնալը մեր բոլոր մտահոգութիւններն ու ցաւերը, մոռնալը գալիք օրերու անորոշութիւնն ու անկէ ծնած անդիւանքը եւ ապրիքը բնութեամբ:

Ժամանակակից կեանքը բնութենէն շատ հեռու կը պահէ մեզ, մեր առօրեայ աշխատանքներուն եւ քաղաքներու ան-բնութիւն վիճակին պատճառով, բայց բոլոր անոնք, որոնք կը շարունակեն մօտ ըլլալ բնութեան, իրենց ճիգով թէ բնութեան գիրկը ապրելու իրողութեամբ, ինչպէս գիւղերու կամ ճոխ բնութեամբ վայրերու մէջ, կրնան հաստատել, թէ բնութիւնը ունի կախարդանքն ու զօրութիւնը մեր հոգին ամոքելու, որքան ալ ծանօթըն պարտասուն կամ վիրաւոր ըլլայ ան:

«Առանց ծաղիկներուն գոյութիւն չենք ունենար», ըսուած է, «որովհետեւ ակօսներուն միջեւ ծնկելը, հունտերու եւ աստղերու միջեւ ծնկելուն նման է», - ժամանակին եւ եղանակներու շրջածիրին միաժամանակ հպելու պէս, -



եւ առիթ մը ինքզինքնէն ներս խորանալու՝ գտնելու համար անցողիկ եւ վեր-անցական, փխրուն եւ անկոտորում, հողին նման համեստ հումքը մեր եութեան: Զետաքրքրական է, որ համեստ բառին լատիներէն արմատը humilis է, այսինքն վար, ցած: Կարելի չէ դիտել ծաղիկ մը եւ չմտածել կեանքի իմաստին մասին. կարելի չէ ըլլալ բնութեան մէջ եւ ոչ միայն չմտածել կեանքի իմաստին մասին, այլ չհիանալ հրաշքով, որ կեանք կը կոչուի:

Աւելին, կարելի չէ դիտել բնութիւնը առանց մտածելու այդ հրաշքը կարելի դարձնող գերագոյնին մասին եւ չունենալ ակնածանքի խորունկ զգացում:

-Պէտք է բնութեան մէջ մտնել յարգանքի եւ վախի միախառն ապրումով, - կ'ըսէր երիտասարդ մը, որ ծանօթ է Զայաստանի բնութեան մէջ իր ըրած թափառումներով (hike):

Յօրենական տանս մէջ ունէինք լօշի թաղար մը (cyclamen), որուն ծաղիկները արհեստական էին. մայրս շատ կը սիրէր այդ թաղարը, յետոյ իմացայ, երբ արդէն ձերբագատուէր էի անկէ, ամէն արհեստական, մանաւանդ արհեստական ծաղիկներ չսիրելուս համար: Պէտք էր հարցունքս ըլլայի, թէ ինչո՞ւ շատ կը սիրէր այդ կեղծ ծաղիկները, որոնք համար այդքան նեղուցեալ: Թերեւս յիշատակ-նուէր մըն էր, թերեւս դէպքի մը կապուած էր, կամ պարզապէս իրեն համար կը խտացներ բնութիւնը, որուն մէջ յաճախակիօրէն ըլլալու առիթներ չունէր:

Բնական ծաղիկներուն եւ բոյսերուն, նոյնիսկ պատշգամբ թաղարներուն մէջ ցանուած բանջարեղէնի տուած գոհունակութիւնը այնքան մեծ է, որ շատ շատեր կը գբաղին անով: Կը յիշէ՞ք Զալեպի նոր կառուցուող շէնքերը, որոնք անպայման պահակ մը կ'ունենային, պահակը իր ընտանիքը կը բերէր այնտեղ ապրելու համար. անխտիր բոլոր պահակները կ'ունենային թաղարներ, նախ գետնայարկը, ուղղակի հողին վրայ շարուած, յետոյ առաջին յարկի տակաւին պատ չունեցող պատշգամբի եզրին շարուած. եւ ի՞նչ առողջ, ի՞նչ փարթամ կ'ըլլային այդ բոյսերը, որոնք յաճախ գարմացուցեր էին գիս՝ ի՞նչ կ'ընէն որ այսքան առողջ կ'ըլլան իրենց բոյսերը, մինչ իմիներս հազիւ հազ կը շնչեն:

Նոյն իմայքը պիտի ունենայի՞ն մեր ընտանեկան պարտեզները՝ ճեմարանի, ԶԵԸ-ի, Կրթասիրացի եւ մնացեալ պարտեզները, եթէ չունենային մեծ ծառեր եւ փոքր թուփեր:

Բոյս մը, ծաղիկ մը կամ ծառ մը իր ամբողջութեան մէջ կատարեալ է, ինքնագոհ, կը ժպտի արեւին, որմէ կ'անուէ իրեն պէտք եղած լոյսն ու ջերմութիւնը, կ'ապրի առանց մտահոգուելու շուրջիներով, կը բաշխէ իր բոյնն ու գեղեցկութիւնը բոլորին անխտիր, ապա կը մահանայ ոտքի կեցած, իր ամբողջ արժանապատուութեան մէջ: Բոյս մը, ծաղիկ մը կամ ծառ մը ամբողջ է ինքն իր մէջ, միաժամանակ մաս կազմելով հողին, ամբողջ բնութեան: Այդպէս ալ մենք՝ մեզմէ իւրաքանչիւրը ինքնուրոյն է, միաժամանակ մաս կազմելով ազգին, եւ անշուշտ՝ ամբողջ մարդկութեան:

Չարմանալի չէ ուրեմն, որ մեծ գրագետներուն եւ մեծ արուեստագետներուն համար ներշնչանքի գլխաւոր աղբիւրը բնութիւնն է:

Վիրճինիա Ուոլֆ հետաքրքրական գաղափար մը ունի. «Բոլոր գրագետները տխուր են. գիրքերուն տուած պատկերները շատ մութ են. բառ չունեցողներն են միայն որ ուրախ են՝ կիները իրենց խորճիքներու պարտեզներուն մէջ»:

Միայն Մեծարեցի քերթողութեան կարելոր մէկ մասը նուիրուած է բնութեան եւ ներշնչուած անկէ. իր գեղեցկագոյն քերթուածներէն մէկը «Ջըրտուք»-ն է, թեւ միւսները եւս նուազ գեղեցիկ չեն.

ՄԵՂՈՒՆԵՐԸ

Տենչանքները, տարագնացի՛կ մեղուներ, ոսկի երիզ մը բանալով ու գանակներ անձրեւելէն թըռան, գացին, երամ-երամ. անցան, գացին դարուղիէն, կիսաթափանց մըշուշներու ապրշում քօղքը պատռելէն եւ հածելէն մէշն արեւին ոսկեծաղիկ մառախուղին:

ՋՐՏՈՒՔ

Յոյհո՛յ, գետը կը թըջէ ցայգուն քամակն արծաթուած, հր յորձքին մէջ ծեծելով անդուլ խարակն ու խութեր. Յոյհո՛յ, առուն յորդառատ դալարին ծոցն է նետուէր Գաղջ տարփանքովն իր շուրին՝ ուր արեւը կ'ապրի դէռ:

Յիւանդութեան օրերուն, հաւանաբար պատուհանի մը առջեւ դրուած բազկաթոռին գամուած, նայուածքը անկարող կարօտով ուղղած բնութեան, Մեծարեց բնութիւնը կը թարգմանէր կարծես, միաժամանակ թարգմանելով բնութեան կարօտ իր հոգիին իղձերը եւ անպայմանօրէն մխիթարելով ինքզինքն՝ հողին մէջ թաղուած հատիկին պատկերով, որ պիտի ծլէր օր մը:

Քերթողութեան պարտեզին ժրաջան պարտիզ պանը, այս տաղանդաւոր պատանին:

Նշմարա՞ծ էք, որ պարտիզ պանները ընդհանրապէս կ'ըլլան համեստ, ժրաջան, մանաւանդ՝ հանդարտ. իրենց ժպիտը նոր բացուած ծաղիկի մը փայլքը կ'ունենայ եւ իրենց հանդարտութիւնը խաղաղութեան թեւածումը ունի:

Ի գուր չէ, որ Ռապինտրանաթ Թակոր (Rabindranath Tagore, 1861-1941), 1913-ի Նոպելեան դափնեկիր պենկալի (Յնդկաստան) գրագետը ամբողջ գիրք մը գրած է «Պարտիզ պանը» խորագրով:

«Ո՛վ ես դուն, ընթերցող, որ հարիւր տարի անց բանաստեղծութիւններս կը կարդաս: Ես չեմ կրնար ձեզի ուղարկել նոյնիսկ մէկ ծաղիկ գարնանային այս հարստութենէն, մէկ ոսկի՝ այնտեղի ամպերէն: Բացէ՛ք ձեր դռները եւ դուրս նայեցէ՛ք»:

Յանել, ինամել, գուրգուրալ ամէն բան, որուն կը հանդիպիք մեր կեանքին ընթացքին: Կարենալ պարտիզ պան ըլլալ եւ կեանքը դիտել խաղաղ նայուածքով. ահա մարդ ըլլալու յատկանիշերէն մէկը:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԿՉՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլվբօշեան-Պօղիկեան
 Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
 Վեհան Պարսումեան

Զեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
 Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
 Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
 Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
 Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվբօշեան
 Յաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
 - Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
 - Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
 - Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
 - Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ԱՍՏՆՈՐՈՒԹԻՒՆ ԲԵՐՈՒՅ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը թելադրենք Յալեպ բնակող վարձակալներուն, ներկայանալ Ազգ. Առաջնորդարանի հաշուապահութեան գրասենեակը եւ փակել 2022-ի տարեկան վարձքը մինչեւ 31/12/2022, օգտուելու Կալուածոց Գողաբարձութեան սահմանած գեղչէն: Նաեւ այն վարձակալները, որոնք կը բնակին երկրէն դուրս, պարտին իրենց տարեկան վարձքերը փակել:

Կալուածոց Գողաբարձութիւն

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԴՐՈՐ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

Հայ ժողովուրդի ծոցն ծնունդ առած եւ դար մը ամբողջ անսակարկ նուիրումով հայ ժողովուրդին ծառայած Ռամկավար Ազատական Կուսակցությունը, անցեալ տարի, բոլորեց իր հիմնադրման 100-ամեակը: Հայաստանի մէջ հանդիսաւոր եւ պետական մակարդակով նշելէ ետք 100-ամեակը, Շաբաթ, 10 Դեկտեմբեր 2022-ի երեկոյեան ՅԲԸՄ-ի «Նազարեան» սրահին մէջ, ներկայութեամբ հոգեւոր պետերու, ՀՀ հիւպատոսի, կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներու, հաւատարմ շարքայիներու եւ համակիրներու պաշտօնապէս նշուեցաւ ՌԱԿ-ի 100-ամեակը, կազմակերպութեամբ Հալեպի Թեքեան Մշակութային Միութեան Տեղական Վարչութեան:



Սուրիոյ, Հայաստանի եւ ՌԱԿ-ի քայլերգներու ունկնդրութենէն ետք, հանդիսականները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգեցին նահատակներուն յիշատակը:

Արաբերէն բացման խօսք արտասանեց ԹՄՄ-ի Տեղական Վարչութեան ատենապետ բժիշկ Յարութիւն Նազարեան, իսկ հայերէն՝ Շահիկ Համալեան:

Ապա հրամցուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը:

Արփի Գրտանեան ասմունքեց ժագ Յակոբեանի «Խրախճանք» քերթուածը: Լարային քառեակը, մասնակցութեամբ Դաւիթ Մելքոնեանի (ջութակ), Շահէ Աւագեանի (ջութակ), Սարգիս Աւագեանի (Վիոլա), եւ Սելա Չաքարեանի (թաւ ջութակ), ներկաները հմայեց իր բարձրորակ կատարումով:



Եւզիւն Նազարեան կարդաց Հայաստանի Կեդրոնական Մարմնի շնորհաւորագիրը: Հալեպի մէջ նշանակալի ներդրում ունեցած նոր հանգուցեալ Լեւոն Պլըխեանի յիշատակին նուիրուած տեսերիզ մը ցուցադրուեցաւ: Տարօն Գասպարեան ասմունքեց Միքայել Նալպաստեանի «Երգ Ազատութեան» քերթուածը: Օրուան հանդիսավար Մելիւն Էքմեքճի կարդաց ՀՀԴ-ի, ՄԴՀԿ-ի, ՀԲԸՄ-ի եւ Հայ Աւետարանական համայնքի համայնքապետ Վեր. դոկտ. Յարութիւն Սելիմեանի շնորհաւորական գիրերը: ՌԱԿ-ի մասին տեսերիզի ցուցադրութենէն ետք, ելոյթ ունեցաւ մենեքիզ Աօ Սերչեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Ռաֆֆի Քէչեճեանի:



Օրուան բանախօս՝ Հալեպի ՌԱԿ-ի ատենապետ մեթր Կարապետ Ծուշանեան, համառօտ կերպով ներկայացուց կուսակցութեան անցած ուղին ու ըսաւ. «Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ունեցաւ իմաստութիւնը դրսեւորելու ոչ թէ քաղաքական, այլ ազգային մօտեցում՝ հայոց հայրենիքի վերաշինութեան եւ բարգաւաճման համար սփիւռքահայ զանգուածները հայրենադարձութեան առաջնորդելու տեսակետներէ: ՌԱԿ-ի ներդրումը մեծ եղաւ. Սփիւռքի հայոց ոգեղէն ու մտաւոր յեղաշրջման մէջ՝ անտարբերութեան, վախի եւ հակա-Հայաստանեան հոգեվիճակէ՝ առաջնորդելով դէպի վստահութիւն, հաւատք եւ սէր մեր հայրենիքի նկատմամբ: Այնուհետեւ ՌԱԿ-ը ծնունդ տուաւ 1947-ին Թեքեան Մշակութային Միութեան, որ շուտով տարածուեցաւ բազմաթիւ համայնքներու մէջ: Վերջինիս ջանքերով հայրենիք-Սփիւռք մշակութային կապերը անելի ամրապնդուեցան»:

Ապա իր սրտի խօսքը ներկաներուն ուղղեց Հայաստանի Հանրապետութեան Հալեպի գլխաւոր հիւպատոսը, որմէ ետք կատարուեցաւ գնահատագրերու բաշխումը:

Հուսկ, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Մակար Սրբ. Եպիսկոպոս Ազարեանի դրուատական եւ խրախուսիչ խօսքերով յայտագիրը իր ակարտին հասաւ:

«ԱՄԱՆՈՐ» ԵՄ, ԹԷ՝ «ՆՈՐ ՏԱՐԻ» ԱՅՍՊՊԷՍ կամ ԷՆՊԷՍ, ԴՈՒՆՈՅՆՆ ԵՄ, ԷԼԻ՛... (Մեր հրաշք Լեզուի երկու ճիւղերու համաստեղութեամբ)

Հրանդ Մ. Մարգարեան

«Պիտի գաս». կ'ասեն, թէ՛ մատղաշ տղերք, թէ՛ խոր ծերունիք, օրօրոցի մէջ երեխեքն անգամ...

Պիտի գաս, գիտե՛նք, առանց անձնագրի կամ արտօնութեան:

Ի՞նչ կայ շալակիդ: Օրերիդ խորքը ի՞նչ ես ամբարել, -միայն դո՛ւ գիտես:-

Թէ ամբարել ես զարդեր պէս-պիսակ, կամ իմաստագործ գոյն-գոյն նուերներ: Թէ հինին նման պիտի բարբաջես եւ սուտ յանգերով դու մեզ օրօրես, Ապա՛՛ ո՛՞ք, ՄԻ՛ ԳԱՐ:

Արդէն յոգներ ենք սին երագներու ճահիճներուն մէջ փրկութեան լաստեր միշտ որոնելով...

Եթէ պիտի գաս, եկուր դուն այնպէ՛ս՝ որ ժպիտ գծուի բոլորի դեմքին, եւ արցունքն կորչի՛: Սպասումն դառնայ խրախճանք կեանքի:

Երջանկութիւնը թեւերն տարածած մտնէ ամեն տուն առանց հարցումի:

Որ՛ մեր արեւը, ո՛չ, չխաւարի՛: Որ՛ «բարի լոյս»-ը, պարզ խօսք չլինի: «Բարի իրիկուն»-ն նոր բարեւ բերի: Որ՛ մեր օրերը ուս-ուսի տուած յանկերգը երգեն չխօսուած բառի: Որ՛ մանուկն իր մօր «օրօր»-ի կողքին իր հօր քնքշանքը իր խաղին տանի: Մայրը ծունր չգայ որդու շիրիմին:

Որ՛ մա՛րդը, մա՛րդը էլ գէնք չկրի՛ եւ խաղաղութեան ճերմակ աղանին ազա՛տ, համարձակ երկնքում ճախրի:

Տունը ուռճանայ, երգերով լեցուի: Ո՛չ ոք սուգ պահի:

Արդարութիւնը հոգու զարդ դառնայ: Խաղաղութիւնը երկնքի նման համայնատարած աշխարհը ծածկի...

Այն ատեն՛ միայն, մենք հաւաքբար՛ կը շեփորե՛նք քեզ եւ դափնիներով գո՛վքդ կ'օրհներգենք եւ եկեղեցոյ զանգերով մեր հին կը փառաբանենք խորհուրդդ խորին: Զարը խափանե՛նք Բարին ողջունե՛նք:

Անարդարութիւնը հրկիզենք, նետենք, անոր փոխարէն, համայնատարած սիրոյ աղբիւրներ աշխարհին բաժնենք:

Այն ատեն, այո՛, հազար երանգով քե՛զ կ'ոգեկոչենք եւ միահամուռ՝ «գալուստդ բարի» աշխարհին կ'երգենք. ի՞նչ որ էլ կոչուես՝ «Ամանոր», «Նոր օր», կամ էլ «Նոր Տարի»...

Բայց...

Մի՛ գար: Մի՛ գար, եթէ գունտին այս՝ -բազմիցս խաբուած պարտասած լլկուած- խաւար պիտ' տիրի...

Ո՛՞ք, ՄԻ՛ ԳԱՐ:

ՄԻ՛ ԳԱՐ:

Նիւ Եորք 12-11-22

ՀՅԴ 132-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՈՒՂՈՒԱԾ ԸՆՈՐՀԱՒՈՐԱԳՐԵՐ

ՀՅԴ-ն լոյսի կամ խաւարի տակ եւ ամենէն դժուարին պայմաններուն մէջ անգամ գործած է քաջութեամբ եւ վճռակամութեամբ, ունենալով հասուն քաղաքական կեանք մը:

Համախմբուելով մեր ազգային ժառանգութեան եւ միասնականութեան շուրջ, պիտի գոյատեւենք ի փառս հայ ժողովուրդի անվտանգութեան:

Ներկայ հրամայականներուն ընդառաջ, յանձնառութեամբ պահպանելով համահայկական միասնական ոգին, կը շնորհաւորենք ՀՅԴ-ի 132-ամեակը:

ՄԴԴԿ-ի Սուրիոյ Հիւսիսային Շրջանի Վարչի Մարմին

Թեքեան Մշակութային Միութեան Վարչութեան անունով ընդունեցէք մեր խորին շնորհաւորութիւնները ՀՅԴ 132-ամեակին առիթով:

Յոյսով ենք, որ եկող տարիներուն ալ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին իր լաւագոյնը տալով կը շարունակէ ազգապահպան սրբազան գործը:

Կը մաղթենք ձեզ յաջողութիւն՝ համագործակցութեան լաւագոյն մաղթանքներով:

Թեքեան Մշակութային Միութեան Տեղական Վարչութիւն

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր հիմնադրութեան օրէն ի վեր հայ ժողովուրդի քաղաքական կեանքի առաջատար ուժերէն մէկը հանդիսացած է՝ մշտապէս իր ուրոյն դերը ունենալով անոր ազատագրական պայքարի ընթացքին, յանուն արդար դատի պահանջատիրութեան:

Անուրանալի է ՀՅԴ-ի դերակատարութիւնը հայկական անկախ պետականութեան վերականգնումին մէջ: Արամ Մանուկեանի եւ անոր ընկերներուն անունները նուիրական են մեր ողջ ժողովուրդին համար:

Անցեալէն այսօր, երբ նժարի վրայ դրուած է հայրենիքի պետական ու ազգային անվտանգութիւնը, ՀՅԴ-ն իր ազատատենչ հայրորդներուն նուիրումով, ազգային կուսակցութիւն ըլլալու հանգամանքով: Այսօրուան մեր դիմագրուած վատառոյժ եւ անուղղայ օրերուն, ՀՅԴ-ն կոչուած է հայ ազգը միակամ եւ պինդ պահող կազմակերպութիւնը ըլլալու՝ ապահովելով համերաշխութիւնը ազգի բաղադրիչներուն միջեւ:

Որպէս Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Պետ եւ յանուն Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին, կը շնորհաւորեմ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 132-ամեակը եւ կը մաղթեմ, որ Հայրենիք-Սփիւռք միասնական ոգիով եւ ապագայի նկատմամբ իրատեսական մօտեցումներով ՀՅԴ-ն նուաճէ նորանոր ամեակներ:

Վեր. Դոկտ. Յարութիւն Սեփմեան Համայնքապետ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի

Կրթասիրաց Մշակութային Միութիւնը ջերմապէս կը շնորհաւորէ, Հայ Երիտասարդաց Միութիւնը «Սփիւռքով ու Հայրենիքով Անսասան Հայութիւն» խորագիրը կրող հանդիսութիւնը կազմակերպելուն առիթով, որ նուիրուած է ՀՅԴ 132-ամեակին:

Արդարեւ, բարձրօրէն կը գնահատենք ՀՅԴ-ի տքնաջան աշխատանքը եւ նուիրումը:

Կենսունակ մնաք, քաջառոյժութեամբ ու իմաստութեամբ զինուիք՝ ձեր պատասխանատուներով եւ բոլոր անդամներով, որպէսզի վերանորոգ հաւատքով ու նուիրումով շարունակէք ձեր ազգային, ընկերային ու մշակութային ծառայութիւնը:

Բարեխաջող երթ դէպի լուսաւոր ամեակներ: Կրթասիրաց Մշակութային Միութիւն

Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութեան Գործադիր Մարմինը ջերմապէս կը շնորհաւորէ ձեզ՝ ՀՅ Դաշնակցութեան Հիմնադրութեան 132-ամեակին առիթով, բարձր գնահատելով ՀՅԴ-ի ժողովրդանուէր ծառայութիւնը եւ հայաշունչ ու ազգանուէր սերունդներ պատրաստելու սուրբ առաքելութիւնը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը տարիներ շարունակ սատար կանգնեցաւ հայապահպանման գործին եւ ազգային ոգի ներշնչելով՝ դարձաւ բոլորանուէր ծառայելու անզուգական օրինակը:

Մեծապէս կը գնահատենք բոլոր անոնք, որոնք մաս կազմեցին այս ձեռնարկին եւ կը մաղթենք որ հաստատ քայլերով եւ աննկուն կամքով շարունակէք ձեր երթը՝ միշտ պատենշի վրայ մնալով եւ հաւատարմօրէն ծառայելով ձեր մշտանորոգ ուխտին:

Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութեան Գործադիր Մարմին

Կը շնորհաւորենք ՀՅԴ 132-ամեակը, ցանկանալով մշտանորոգ նուաճումներ ազգային եւ հայապահպանման իր առաքելութեան մէջ:

Ազգ. Մշակութային Միութեան Վարչութիւն

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան սիրելի՛ անդամներ եւ համակիրներ,

Սրտանց եւ ջերմագին մաղթանքներով կը շնորհաւորենք ձեզ ՀՅԴ 132-ամեայ յոբելեանին առիթով:

Հայ ժողովուրդի ազատագրութեան պատմութեան մէջ իր ուրոյն դերը ունեցած եւ արգասաւոր գործունէութիւն ծաւալած ՀՅԴ-ն այսօր կը տօնախմբէ իր հիմնադրութեան 132-րդ տարեդարձը: Տարեդարձ, որուն հետ կը փոխկապակցուի մեր ժողովուրդին հաւաքական խտելներուն եւ վախճանական նպատակներուն հիմնադրոյթը:

Երբ յետադարձ ակնարկ մը կը նետենք ՀՅԴ-ի 132-ամեայ կեանքին ու վաստակին, կրնանք անվարան ըսել, որ ան, ինչպէս, անցեալին՝ ներկայիս ալ կարեւոր ներդրում ունի մեր ազգային կեանքին մէջ: Ան մեծապէս սատարած է հայկական մշակոյթի վերելքին, Հայ Դատի հետապնդումին՝ միջազգային գետնի վրայ եւ վառ պահած է նորահաս սերունդներու պահանջատիրական ոգին:

Փաստ է, որ Սուրիոյ պատերազմի ամենածանր օրերուն, մասնաւորապէս Հալէպի մէջ, հայ անախական կուսակցութիւնները ձեռք-ձեռքի շարունակեցին իրենց պայքարը բոլոր ճակատներուն վրայ, մասնաւորապէս ներքին ճակատին վրայ: Միասնականութեան շունչով առաջ տարուած գործունէութիւնը տուաւ փայլուն արդիւնքներ:

Այսօր ալ հրամայականը նոյնն է, եւ մենք որպէս Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, պիտի շարունակենք հաւատալ միասնականութեան շունչով առաջ տարուող գործունէութեան արդիւնաւետութեան, վստահ ըլլալով, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործընկերները նոյն ոգիով, նոյն արդարամտութեամբ եւ նոյն նուիրումով պիտի գործակցին մեզի հետ՝ յանուն սուրիահայութեան բարօրութեան եւ յանուն հայկական Հալէպի ամբողջական վերականգնումին:

Անգամ մը եւս ընդունեցէք մեր անկեղծ շնորհաւորանքները: Կը մաղթենք արգասաբեր ընթացք, արդիւնաւետ աշխատանք ու խաղաղութիւն՝ յանուն Հայաստանի, յանուն Արցախի եւ համայն հայութեան:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Շրջանային Վարչութիւն

ՀՅԴ 132-ամեակի առիթով Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղականութիւնը կը շնորհաւորէ մեր ժողովուրդի յանրապահական յիշողութեան մէջ դրոշմուած, նուիրումի եւ նպատակի Դաշնակցութիւնը, որ իր կազմակերպական կառոյցով առաւել ամրակում է եւ նոյն ուժակնութեամբ ու աւիշով կը շարունակէ իր հաստատակամ երթը, ոչ միայն Սփիւռքի՝ այլ նաեւ Հայաստանի եւ Արցախի մէջ, իր նուիրեալ փաղանգներու անձնուրացութեամբ:

Դաշնակցութիւնը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու իր նահատակներու արիւնքով եւ պայքարունակ ոգիով, միշտ դրսեւորելով պատասխանատու կեցուածք, ըլլալով ժողովուրդին հետ, առանց շեղելու իր սկզբունքներէն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղականութիւն

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն... 132 տարի առաջ հայ ժողովուրդի ծոցէն ծնունդ առնող, ապրեցար անոր հետ ու անոր համար, մարտնչեցար անոր ազատութեան համար ու «Լաւագոյն Տղերքը» գոհաբերեցիր ազատութեան բազիլին:

132 տարի ետք, նոյն ուժակնութեամբ ու աւիշով կը շարունակեն երթը, հաստատակամ ու վճռական. նուիրեալ փաղանգներու անձնուրացութեամբ կը կերտեն լուսաւոր պատմութիւն:

Ողջոյն 132-ամեայ վաստակիդ, Ողջոյն գալիքիդ ու բարիքիդ, Ողջոյն ըեզ ծնող ու պահող ժողովուրդին:

Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւն

ՀԱՄԿ-ի Կեդր. Վարչութեան անդամն ու Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը սրտի անհուն բերկրանքով կ'ողջունեն եւ կը շնորհաւորեն ողջ հայութիւնը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 132-ամեակին առիթով:

Հայկական արժեքներու պահպանումին եւ Հայ Դատի հետապնդումին նախանձանդիւր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ կարգախօս ունենալով «Սփիւռքով ու Հայրենիքով անսասան Հայութիւն»-ը, կառչած կը մնայ իր դաւանած գաղափարախօսութեան եւ սրբազան առաքելութեան, ի ինդիր հայ ժողովուրդի գերագոյն շահերուն:

Բիւրյարգանք ՀՅԴ-ի շարքերէն ներս իրենց անսակարկ ծառայութիւնը մատուցող բոլոր նուիրեալներուն:

ՀԱՄԿ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւն

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը առաջին իսկ օրերէն եղած է շեշտակիօրէն գործի կուսակցութիւն՝ ան միշտ թիկունք կանգնած է եւ կը շարունակէ կանգնիլ հայ ժողովուրդին՝ Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ եւ կը շարունակէ դրօշակիրը մնալ հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարին:

«Զրիստափոր» Գրադարանի Վարչութիւն

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ

Խոյ
Շատ բարենպաստ շրջան մը պիտի ըլլայ ձեզի համար՝ ընտանիք կազմելու եւ փոխ յարաբերութիւններ ամրապնդելու: Բարեյաջող շրջան է ձեր ուժերը վերականգնելու:

Ցուլ
Ամէն ինչի մէջ անշահախնդիր եղէ՞ք եւ քիչ մըն ալ ձեր սեփական սկզբունքները գոհեցէ՞ք: Ձեր առողջութեան հոգ պէտք է տանիք եւ հանգստանաք:

Երկուորեակ
Ձեր աշխատասիրութիւնը մեծ հնարաւորութիւններ պիտի տայ ձեզի շահաւետ ներդրումներ կատարելու համար: Անհրաժեշտ է խուսափիլ ծանրաբեռնուածութենէ:

Խեցգետին
Բախտը ձեր կողքին պիտի ըլլայ այս շաբաթ: Վերջապէս պիտի հասնիք ձեր նպատակներուն:

Առիծ
Լուրջ պայքար պէտք է տանիք ձեր խնդիրները լուծելու համար: Ձեր անձնական ճիգերուն շնորհիւ պիտի տիրանաք նորանոր յաջողութիւններու:

Կոյս
Անհրաժեշտ է ճիշդ ձեռով կատարել տնային գնումները եւ մեծ գումարներ չմսխել: Համբերութեամբ եւ իմաստութեամբ պիտի յաղթահարէք այս շրջանը:

Կշիռք
Դուք շատ աշխատասեր եք եւ երբեք չէք խուսափիր պատասխանատուութենէ: Հիւանդութիւններէ զերծ մնալու համար յաճախ հանգըստացէ՛ք կամ բարեկամի մը ընկերակցութեամբ գբօսնեցէ՛ք:


Կարիճ
Պէտք է ապաւինիք ձեր սեփական ուժերուն՝ ձեր ծրագիրները իրականացնելու համար: Չսպեցէ՛ք ձեր բացասական ազդակները մարդոց հետ յարաբերութեան մէջ:

Աղեղնաւոր
Այս շրջանին անախորժ դէպքեր եթէ պատահին՝ մտերիմ բարեկամներու աջակցութիւնը խնդրեցէ՛ք:

Այծեղջիւր
Աւելի քրտնաջան աշխատեցէ՛ք արդիւնքի հասնելու եւ նոր նուաճումներ իրականացնելու համար:

Ջրիս
Մեծ փոփոխութիւններու շրջան մը կը սպասուի ձեզի այս շաբաթ: Սեփական ինքնագարգացումի ճամբով կրնաք հասնիլ բարձր դիրքերու եւ հոգեկան գոհունակութիւն ունենալ:

Ձուկ
Անհրաժեշտ է կեդրոնանալ ձեր պարտաւորութիւններուն վրայ: Բազմաթիւ դրական գաղափարներ ունիք, որոնք յաջողութեամբ պիտի պսակուին:



Աննա Տէր Պօղոսեան-Տարաքճեան

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԱՂՅԱՆՆԵՐ

Ամանորը համեղ ու ախորժաբեր ուտեստներով դիմաւորելու համար մեր սիրելի ընթերցողներուն կը ներկայացնենք հետեւեալ աղցանները:

1) Տօնածառի Տեսքով Աղցան

Այս աղցանը իւրայատուկ է, քանի որ իւրաքանչիւր բաղադրիչ իր տեղը ունի: Պտուղներուն համը լաւապէս կը համադրուի մաշած խմորի համի եւ հաւի հետ:

Ամանորեան աղցանը ավելի համեղ կ'ըլլայ, եթէ օգտագործենք տունը պատրաստուած մայրնեղը:

Մայրնեղի պատրաստութեան մէջ ոչ մէկ դժուարութիւն կայ. պարզապէս պէտք է կամաց-կամաց հարել 150 մլ. արեւածաղիկի ձէթը, 1 հաւկիթը, 0,5 թէյի դգալ աղը, 1 թէյի դգալ շաքարը եւ 1 ապուրի դգալ մանսեխը:

- Տօնածառի բաղադրիչները
- 3 կտոր հաւու կուրծք
 - 1 ստեպոլին
 - 3 հաւկիթ
 - 79 կրամ պանիր
 - Մէկ խնձոր
 - Ազատքեղ կամ որեւէ այլ կանաչութիւն
 - Մայրնեղ ըստ ճաշակի

Պատրաստութիւն

-Հաւուն կուրծքերը եւ ստեպոլինը նախապէս խաշել եւ պատրաստել: 7-8 վայրկեան խաշել նաեւ հաւկիթը:

-Հաւու միսը մանր կտրտել, իսկ ստեպոլինը, հաւկիթը եւ պանիրը մանր քերիչէ անցընել:

-Այժմ ձեւաւորենք ծառը. Առաջին կարգին միսը եռակուսան շարել, ետքը ստեպոլինն ու հաւկիթը:

-Իւրաքանչիւր շերտին վրայ քսել մայրնեղը:

-Խնձորը քերել մանր քերիչով եւ դնել աղցանի յաջորդ շերտով: Քսել մայրնեղը եւ ցանել քերուած պանիրը:

-Քիւրիս մաքրել եւ կլոր-կլոր կտրտել, ապա շարել պանիրին վրայ:



2) Ճակնդեղով Աղցան



- Բաղադրութիւն**
- 500 կ. ճակնդեղ
 - 1 թէյի դգալ շաքար
 - 2 հաւկիթ
 - 1 ճաշի դգալ խնձորի քացախ
 - 70 կ. սոխ
 - 1 փունջ ազատքեղ
 - 80 կ. թթուաշ վարունգ
 - 1 պտղունց կարմիր պղպեղ
 - 2 տուփ թունա (ձկնդեղ)
 - Մայրնեղ

Պատրաստութիւն

Ճակնդեղը եփել, հաւկիթը խաշել: Ճակնդեղը կեդրուել եւ քերիչէ անցընել: Սոխը կտրտել քառորդ օղակներով, պանիր մը մէջ խառնել քացախը եւ շաքարը: Կտրկել թթուաշ վարունգը եւ անցնել ճակնդեղին վրայ: Ապա ձուկն ու կտրտուած հաւկիթները անցնել:

Ազատքեղը մաքրել, մանրել եւ անցնել զանգուածին վրայ, ետքը անցնել մնացեալ: Աղցանը մանանեխով եւ մայրնեղով խառնել եւ վայելել:

Բարի ախորժակ

Մարզական



Ռաֆֆի Սիկսիան

ԱՐԺԱՆՔԻՆԻ ՀԱՄԱՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ԵՈՒՎԻ ԱՆՈՅԵԱՆ

Տոհայի «Լուսիլ» մարզադաշտին մեջ աւարտին հասաւ 2022-ի համաշխարհային ֆութպոլի մրցաշարը, որուն աւարտական մրցումի մրցակիցները դարձան Ֆրանսան եւ Արժանթինը:

Ֆրանսացի խաղացողները ազդուած էին իրենց կազմին մեջ խուժած համաճարակէն, եւ ուժաթափ վիճակով ներկայացան հանդիպումին, որուն 23-րդ վայրկեանին Արժանթինի հաւաքականի խմբապետ Լիոնել Մեսսին տուգանային հարուածով նշանակեց առաջին կոլը, որմէ 13 վայրկեան ետք Անխել Տի Մարիան կըրկնապատկեց արդիւնքը:



Երկրորդ կիսախաղին սկիզբը դարձեալ արժանթինցիները տիրապետած էին խաղարկութեան, բայց անոնք չկրցան մնալ նոյն աշխուժութեամբ: 80-րդ վայրկեանին Քիլիան Մպափիէն տուգանային հարուածով նշանակեց ֆրանսացիներուն առաջին կոլը, որմէ միայն մէկ վայրկեան ետք նոյն մարզիկը նշանակեց հաւասարութեան կոլը: Հիմնական ժամանակը 2 - 2 հաւասար աւարտելով խումբերը դիմեցին յաւելեալ ժամանակի խաղարկութեան:

109-րդ վայրկեանին, արժանթինցիներու աւագ Լիոնել Մեսսին երկրորդ անգամ ցնցեց աշխարհի գործող փոխտէնիսին դարպասը եւ առաջ մղեց իր կազմը, սակայն, արժանթինցիները անգամ մը եւս չկրցան պահել յաղթանակը, երբ 118-րդ վայրկեանին Մպափիէն անգամ մը եւս տուգանային հարուածով նշանակեց հաւասարութեան կոլը: Յաղթողը որոշելու համար կազմերը դիմեցին 11 մեթրի հարուածներու, որուն ընթացքին արժանթին աւելի ինքնավստահ խաղալով նշանակեց 4 հարուած եւ երրորդ անգամ ըլլալով կրցաւ տիրանալ աշխարհի փոխտէնիսութեան:

ՔԻԼԻԱՆ ԵՄՊԱՓՔԷ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՆՍՔՐԻՒՏՆ ԶԱՆԴԻՍԱՑԱՐ

2022-ի համաշխարհային ֆութպոլի մրցումներու աւարտին, Ֆրանսայի հաւաքականի եւ Փարիզ Սան ժերմանի յարձակողական խաղացող Քիլիան Մպափիէն տիրացաւ կոլսքորիստի կոչումին՝ նշանակելով 8 կոլ: Ան յաջողեցաւ ցնցել Աւստրալիոյ, Դանիոյ, Լեհաստանի եւ Արժանթինի դարպասները: Մպափիէն յաջողեց արժանթինցի Լիոնել Մեսսին՝ նշանակելով 7 կոլ: Սոյն արդիւնքով Մպափիէն եղաւ աշխարհի երկրորդ խաղացողը, որ կը յաջողի երկու աւարտական մրցումներու կոլեր նշանակել: Առաջին խաղացողն էր պրագիլցի Վաւան, որ սոյն կոչումին արժանացած էր 1958 - 1962 տարիներուն: 56 տարի ետք, Մպափիէն եղաւ նաեւ առաջին խաղացողը, որ յաջողեցաւ երեք կոլ նշանակել աւարտական մրցումին:



Մեսսի արժանացաւ ԱՇԽԱՐՀԻ ԼԱՐԱԳՈՅՆ ԽԱՂԱՑՈՂԻ «ՈՍԿԻ ԳՆԴԱԿ»-ԻՆ

Աշխարհի եռակի փոխտէնիս հռչակուած արժանթինի հաւաքականի աւագ, Փարիզ Սան ժերմանի խաղացող 35-ամեայ Լիոնել Մեսսի արժանացաւ Քաթարի մեջ աւարտած աշխարհի առաջնութեան լաւագոյն խաղացողի «Ոսկի գնդակ» մրցանակին: Մեսսի առաջին անգամն էր, որ կը տիրանար աշխարհի փոխտէնիսութեան: 2014-ին ան դարձած էր աշխարհի փոխափոխտէնիս:



ՄԵՍՍԻ ԱՐԺԱՆԱՑԱՐ ԱՇԽԱՐՀԻ ԼԱՐԱԳՈՅՆ ԽԱՂԱՑՈՂԻ «ՈՍԿԻ ԳՆԴԱԿ»-ԻՆ

Աշխարհի եռակի փոխտէնիս հռչակուած արժանթինի հաւաքականի աւագ, Փարիզ Սան ժերմանի խաղացող 35-ամեայ Լիոնել Մեսսի արժանացաւ Քաթարի մեջ աւարտած աշխարհի առաջնութեան լաւագոյն խաղացողի «Ոսկի գնդակ» մրցանակին: Մեսսի առաջին անգամն էր, որ կը տիրանար աշխարհի փոխտէնիսութեան: 2014-ին ան դարձած էր աշխարհի փոխափոխտէնիս:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 420)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- «Մնաց Բարովի Իրիկունը» վիպակին հեղինակը:
- Պիրկ հիւսուած բան: Հակառակ՝ եփ: Հայոց չորրորդ ամիսը:
- Հակառակ՝ բարի, ազնիւ: Իրարմէ բաժնել:
- Նմանաձայն տառեր: Ռուսական դրամ մը:
- Խոպան տեղեր բուսնող թուփ, խռիւ: Ունեւոր:
- Գրիգոր Լուսաւորիչի հայրը: Հակառակ՝ շաղկապ մը: Սարսափ:
- Հին մուճակ: Անվերջնատառ՝ անասունի աղբ:
- Յոգնակերտ մասնիկ: Խառնատառ՝ ամ: Սերունդ, տոհմ:
- Վայրկեան: Ընտանի կենդանի մը:
- Իգական անուն մը: Երկինչիւն մը:
- Ոչխարի բուրդ՝ կտրուած ու մաքրուած: Իբր սպեղանի գործածուող բոյս մը:
- Վահանեանց պատմութիւնը գրի առնող պատմիչը:

Ուղղահայեաց

- Գրիգոր Զօհրապի նորավեպերու ժողովածուներէն: Հանքային համեմ:
- Սանդուղ, աստիճան: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Տուգական դերանուն:
- Հակառակ՝ մակաբոյծ միջատ: Քրիստոնէայի նշան: Ոչ բարդ:
- Յարաբերական դերանուն: Արական անուն:
- Հակառակ՝ հողմ: Անվերջնատառ՝ կղպանք, փականք: Որպէս:
- Երեխաներու պայթող խաղալիք: Բուռ:
- Վանայ լիճի կղզիներէն: Լեզուով մը՝ «այո»: Ձայնակիչ մը:
- Ներքին ամրութիւն ունեցող: Արական կոչական բառ:
- Հակառակ՝ շաղկապ մը: Սեղմ, ամփոփ:
- Խակ, անփորձ: Հաստ (ձայն): Ձայնաւոր տառեր:
- Հակառակ՝ տաղ: Կազմիչ մասնիկ: Անցած:
- Իգական անուն: Այժմ:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 419)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ն	ա	ր	ե	կ			վ	ր	ի	ն	ջ
2	ի	ր	ե	ն	ա	ւ	ե	մ	ր	ո		
3	կ	ա	ն		հ	ղ			ս	ա	կ	
4	ո	ա	խ	տ	ա	բ	ա	ն		ն	ա	
5	լ	ո	կ		ր			ր	ա	փ	տ	
6	դ	ր	ա	ն	դ			զ	ո	հ		
7	ո	մ	ն	ա	ն	ն	ա	ղ	ե	կ		
8	ւ	ն		դ	տ	մ	ո	ր	ո	ժ		
9	մ	ա	ն	ի	ա	ն	դ	կ	ա	ց	ո	
10	ա	ղ	ա	մ	ա	ն	դ	թ	ը	ո		
11	ն	ի	զ	ա	կ	ր	ս	ա	ո	ւ		
12	ր		կ	ն	տ	ա	կ	ժ	ա	մ		

ԼՈՒԹՈՒՄ



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆ...

Սկզբը՝ էջ 1

Սրբազան Հայրը դպրաց դասի անդամներով թափօր կազմած է «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքոյ մուտք գործեց եկեղեցի: Կանոնական աղօթք մատուցել է տեղ, Մակար Սրբազան աղօթի ներ կատարեց:

Ճեզիրեի շրջանի հոգևոր հովի Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեան արաբերենով ընթերցեց սորընտիր Առաջնորդ Սրբազան Հոր կենսագրությունը:

Ճեզիրեի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան, Ճեզիրեի թաղականութեան, ազգային, մարդասիրական եւ բարեսիրական միութիւններուն անունով բարի գալուստ մաղթեց



Մակար Սրբազան ժողովուրդին փոխանցեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ողջոյնները, հայրական սերը եւ օրհնութիւնները, յայտնելով, որ ան միշտ կը յիշէ իր հօտի գաւակները եւ աղօթակից է մեզի: «Ազգային Ընդ. Ժողովի երեք օրերու ընթացքին Վեհափառ Հայրապետ իր մտքին առանցքը դարձուցած էր սուրիահայրութիւնը, Սուրիան եւ լիբանանահայութիւնը, որպէսզի կարենանք գոյատեւել, շարունակել եւ ոտքի կանգնիլ», աւելցուց Սրբազան Հայրը:

Սորընտիր Առաջնորդ Սրբազան Հոր, յայտնելով որ Ճեզիրեի հայութիւնը աստուածավախ եւ եկեղեցասեր ժողովուրդ է, կապուած է եկեղեցւոյ եւ կը յարգէ իր հոգևորականները: Ան մաղթեց, որ Աստուծոյ աներեւոյթ աջը պահապան ըլլայ Սրբազան Հոր, որպէսզի Ս. Հոգիին միջնորդութեամբ առաջնորդական ճամբայէն ընթանայ եւ որպէս քաջ եւ բարի հովի, Սողոմոն իմաստունին նման իմաստութեամբ ղեկավարէ եւ առաջնորդէ մեր քաջարի եւ համբերատար ժողովուրդը:

Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան ժողովուրդին ուղղեց իր հայրական պատգամը: Ան նախ գոհութիւն եւ փառք վերառաքեց մեր բոլորին Հոր՝ Աստուծոյ, որ զինք Բերիոյ պատմական Թեմի առաջնորդական գահին վրայ բազմելու եւ իր քաղցր լուծը կրելու արժանի դարձուց, որպէսզի իբրեւ հաւատարիմ ոչխար՝ Քրիստոսի ձայնը լսելով հետեւի իրեն եւ իր ծառայութիւնը բերէ ազգային իշխանութեան բոլոր մարմիններուն, քաղաքական եւ կրօնական ժողովին, որպէսզի մեր ծառայական լուծան դնենք մեր եկեղեցւոյ, ազգին, ընկերութեան, մշակութային, հոգևոր եւ ազգային արժեքներու պահպանման եւ շարունակութեան համար:

Սրբազան Հայրը երախտապարտութեան խօսք ուղղեց Ճեզիրեի Առաջնորդական Փոխանորդին, քահանայ հօր, Թաղական հորհուրդին եւ բոլոր ներկաներուն, որոնք քաղցրութեամբ եւ սիրով համախմբուած այս ընդունելութիւնը կազմակերպեցին: Ան երախտապարտութեան խօսք ուղղեց քոյր եկեղեցիներու եւ յարակից յարա-

նուանութեանց հոգևոր պետերուն եւ եպիսկոպոսներուն, որոնց հետ եկեղեցւոյ ճամբով կոչուած է ծառայելու ժողովուրդին եւ անոր ընդմէջէն Աստուծոյ:

Առաջնորդ Սրբազան Հայրը աղօթք բարձրացնելով ամ Ամենաբարին Աստուած, մաղթեց որ Ամենակալը պահէ ու պահպանէ Սուրիական Հայրենիքը եւ անոր գլխուն կանգնող Վսեմաշուք նախագահ տղոք: Պաշար ալ-Ասատը, Սուրիոյ բանակը եւ պետական աւագանին, որպէսզի յառաջ տանին եւ պահպանեն երկիրը:

Մակար Սրբազան ժողովուրդին փոխանցեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ողջոյնները, հայրական սերը եւ օրհնութիւնները, յայտնելով, որ ան միշտ կը յիշէ իր հօտի գաւակները եւ աղօթակից է մեզի: «Ազգային Ընդ. Ժողովի երեք օրերու ընթացքին Վեհափառ Հայրապետ իր մտքին առանցքը դարձուցած էր սուրիահայրութիւնը, Սուրիան եւ լիբանանահայութիւնը, որպէսզի կարենանք գոյատեւել, շարունակել եւ ոտքի կանգնիլ», աւելցուց Սրբազան Հայրը:

Արարողութիւնը իր աւարտին հասաւ «Տերունական Աղօթք»-ով:

Այնուհետեւ, Փոխանորդարանի դահլիճէն ներս տեղի ունեցաւ աշահամբոյր՝ ի պատիւ Առաջնորդ Սրբազան Հոր:

Այցելութիւն Հասիչէ

Շաբաթ, 17 Դեկտեմբեր 2022-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, պատուիրակութեամբ հովուական այցելութիւն տուաւ Հասիչէի մեր ժողովուրդի գաւակներուն: Պատուիրակութեան մաս կը կազմէին Ճեզիրեի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան, Հոգ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Արժ. Ս. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան, Հասիչէի հոգևոր հովի Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեան, պատկան մարմինի ներկայացուցիչներ, ազգային



երեսփոխաններ եւ Գամիշլիի Թաղականութեան անդամներ:

Բերիոյ Հայոց Թեմի Սորընտիր Առաջնորդին հովուական անդրաւիկ այցելութիւնը, հոգեկան ցնձութեան եւ բերկրանքի եզակի պահ ստեղծեց Հասիչէի գաւակներուն մօտ: Սրբազան Հայրը շերմապետ դիմաւորուեցաւ եկեղեցւոյ Թաղական հորհուրդին, Ազգային Մեսրոպեան վարժարանի հոգաբարձու-

եան, տնօրէնուհին, ուսուցչական կազմին, կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն եւ ՍՕ Խաչի անդամուհիներուն կողմէ: Ընդունելութեան ներկայ գտնուեցաւ նաեւ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Ս. Մորիս Ամսիի Սրբազանը, համայնքի Զահանայ Հօր ընկերակցութեամբ:

Տեղի ունեցաւ աղ ու հացի օրհ-



նութիւն: Աշակերտները սիրոյ բացագանչութիւններով եւ կանչերով բարի գալուստ մաղթեցին Սրբազան Հոր:

«Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ Մակար Սրբազան մուտք գործեց Հասիչէի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի, ուր կանոնական աղօթք կատարեց, ապա, իր հայրական պատգամը ուղղեց ժողովուրդին, փոխանցելով ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ողջոյններն ու օրհնութիւնները, յայտնելով, որ վեհափառ հայրապետը Ազգային Ընդ. Ժողովի երեք օրերու ընթացքին իր մտահոգ ութեան առանցքը դարձուց սուրիահայրութիւնը եւ Սուրիան:

Մակար Սրբազան Ազգային Իշխանութեան, Ազգային Վարչութեան



եան եւ Կրօնական ժողովին ողջոյնները փոխանցելով ժողովուրդին, աստուածային օրհնութեամբ լեցուն օրեր մաղթեց անոնց:

Ան բարձրօրէն գնահատեց եկեղեցւոյ եւ ժողովուրդի գաւակներուն ծառայութեան լծուած Ճեզիրեի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեանը, շրջանի հոգևոր հովի Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեանը, եկեղեցւոյ թաղական խորհուրդը, ազգային վարժարանի հոգաբարձութիւնը, ուսուցչական կազմը եւ կիրակնօրեայ դպրոցի աշակերտները, որոնք ապագայ սերունդին պատկերը ներկայացնելով, իրենց կենսունակ ներկայութեամբ մեզ կը գօտեակոնեն եւ յոյս կը ներշնչեն:

Անդրադառնալով ներկայիս տիրող դժուարին պայմաններուն,

Սրբազան Հայրը յոյս յայտնեց, դիտել տալով, որ Աստուծոյ առաջնորդութեամբ եւ աղօթքով միասնաբար կը յաղթահարենք դժուարութիւնները:

Սրբազան Հայրը հրաւիրեց ժողովուրդի գաւակները, որպէս սուրիացի քաղաքացիներ աղօթելու Սուրիոյ ժողովուրդին, պետականութեան, բանակին եւ անոր Վսեմաշուք նախագահ տղոք: Պաշար ալ-Ասատին համար:

Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները հոգևոր բնոյթի գեղարուեստական յայտագիր ընդմէջէն փունջ մը աղօթքներ արտասանեցին եւ շարականներ երգեցին, արտայայտելով իրենց կապուածութիւնը մեր ազգային, եկեղեցական եւ մշակութային արժեքներուն նկատմամբ:

Այնուհետեւ, Սրբազան Հայրը թափօրով ուղղուեցաւ դէպի կիրակնօրեայ դպրոցի սոր սրահը եւ երի-



ցատուը: Սրբազան Հայրը յուշաքարը քօղագերծելով եւ մամսակցութեամբ Ասորի Ուղղափառ Առաջնորդին ու Ճեզիրեի Առաջնորդական Փոխանորդին, ժապաւենը քակելով բացումը կատարեց դպրոցի սոր սրահին եւ երիցատան: Գերաշնորհ Սրբազան Հոր ձեռնաքն օրհնուեցան սրահն ու երիցատունը:

Տեղւոյն Զահանայ Հայրը օրհնուած ջուրը խաչածել սրկեց երիցատան մէջ:

Սրբազան Հայրը կիրակնօրեայ դպրոցի սրահը անուանակոչեց «Սըրբոց Թարգմանչաց» անունով:

Մակար Սրբազան այցելեց նաեւ Ազգ. Մեսրոպեան վարժարան եւ յարակից ակումբը: Ապա, վարժարանի դահլիճէն ներս աշահամբոյր տեղի ունեցաւ՝ ի պատիւ Սրբազան Հոր:

Մակար Սրբազան փոքրիկներուն Ս. Խաչ նուիրեց, ապա եկեղեցւոյ թաղական խորհուրդին, Ազգ. Մեսրոպեան վարժարանի հոգաբարձութեան, տնօրէնութեան, կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմին եւ ՍՕ Խաչի անդամուհիներուն հետ առանձնապէս հանդիպում ունեցաւ:

Այցելութեան շրջագիծին մէջ, Սրբազան Հայրն ու իրեն ընկերակցող պատուիրակութիւնը առանձին հանդիպումներ ունեցաւ Գամիշլիի եւ Հասիչէի նահանգապետներուն, «Պասա» կուսակցութեան գոյգ շըրջաններու քարտուղարներուն եւ ազգ. մարմիններուն հետ: